«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

ԳԱՎԱՌ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան, 2024

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

Գավառ խոշորացված համայնքի զարգացման ծրագրերի վերաբերյալ համահամայնքային երիտասարդական քննարկման արդյունքների ամփոփման զեկույց

Այս զեկույցը ներկայացնում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակում 2024թ. օգոստոսի 13-ին Գավառ խոշորացված համայնքում կազմակերպված համահամայնքային երիտասարդական քննարկման արդյունքները:

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանում ֆորմալ և ոչ ֆորմալ քաղաքացիական կրթության որակը՝ խթանելու Հայաստանում երիտասարդների հանրային ներգրավվածությունը և ժողովրդավարական գործընթացները: Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ ՄԶԳ կողմից և իրականացվում է «ՓԻ-ԷՅԶ Ինթերնեշնլ» կազմակերպության և իր ենթադրամաշնորհառուներ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-Սիվիտաս» ՀԿ-ի և «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Սույն զեկույցը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի առատաձեռն աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Այստեղ ներկայացված բովանդակությունը «ՓԻ-ԷՅԶ Ինթերնեշնլ»-ի ենթադրամաշնորհառու Մարդկային զարգացման միջազգային կենտրոնինն է, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտագիտության խոսք 3
Ամփոփագիր 4
1. Համահամայնքային քննարկումների ձևաչափը 5
2. Գավառի համահամայնքային քննարկման իրականացման մեխանիզմը 7
3. Սցենարների նախապատրաստման գործընթացը 8
3.1. Սցենարներ 8
Սցենար 1. Էթնոզբոսաշրջության զարգացումը Գավառում. ամենամյա «Հովվի փառատոն» 8
Սցենար 2. Կարիերայի կենտրոնի ստեղծում 9
Սցենար 3. Գավառի «Տուրիստական այցեգրքի» հրապարակում 10
Սցենար 4. Փառատոնների քաղաք Գավառ. կարողությունների զարգացում 11
Սցենար 5. Երիտասարդների համար մարզաառողջարանային համալիրի հիմնում 11
Սցենար 6. Նոր երիտասարդական կենտրոնի հիմնում 12
4. Գավառի համահամայնքային երիտասարդական քննարկումը 13
4.1. Գավառի համահայնքային քննարկման արդյունքներն՝ ըստ սցենարների 14
4.2. Սոցիալական երկխոսությունը երիտասարդների և մեծահասակների միջև 17
5. Մասնակիցների հիմնական դիտարկումներն ու եզրահանգումները 22
6. Քվեարկությունների արդյունքները 41
Հավելված 1. Համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը 42
Հավելված 2. Ցուցումներ սեղանավարներին և գրառողներին 42
Ցուցումներ Գավառի համահամայնքային քննարկման սեղանավարների (facilitator) համար .. 42
Քվեարկության փուլը 43
Ցուցումներ քննարկման գրառողների համար 43
Հավելված 3. Հարցեր, որոնք հնարավորություն կտան սեղանավարներին ուղղորդել քննարկումը .. 44

Երախտագիտության խոսք

«Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակում Գավառ խոշորացված համայնքում **2024թ. օգոստոսի 13-ին** համահամայնքային երիտասարդական քննարկման կազմակերպիչ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնն (ՄԶՄԿ) իր խորին երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր աջակցել են միջոցառման իրականացման աշխատանքներում: Շնորհակալ ենք մասնակցության, օժանդակության և խորհուրդների համար:

Մեզ համար մեծ բավականություն է «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակում աշխատել մեր գործընկեր կազմակերպությունների հետ, և մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում հատկապես ծրագիրն իրականացնող կոնսորցիումը գլխավորող «ՓԻ-ԷՅԶ Ինթերնեշնլ» կազմակերպությանը Գավառի քննարկմանը և ընդհանրապես ծրագրի շրջանակում մեր բոլոր քայլերին անգնահատելի օժանդակության համար:

Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (ԿԳՄՍՆ)՝ ի դեմս Երիտասարդության հարցերի վարչության, իրենց կարևոր և ուղղորդիչ առաջարկությունների, խորհրդատվության, աջակցության, ինչպես նաև Գավառի քննարկմանը մասնակցելու համար: Շնորհակալ ենք նաև երիտասարդության հարցերով փորձագետ Աննա Եղոյանին սցենարների մշակման գործում ցուցաբերած օժանդակության համար:

Շնորհակալ ենք քննարկումների երիտասարդ սեղանավարներին և գրառողներին, ովքեր Հմտությունների լաբորատորիայում վերապատրաստվելուց հետո հավուր պատշաճի ստանձնեցին իրենց գործառույթը համահամայնքային քննարկման ժամանակ և ապահովեցին, որ միջոցառումը կայանա պատշաճ մակարդակով:

Եվ թեև վերջում, բայց ամենակարևոր շնորհակալությունը: Շնորհակալ ենք Գավառ խոշորացված համայնքում համահամայնքային երիտասարդական քննարկման բոլոր մասնակիցներին իրենց մոտիվացված ու բարձրամակարդակ մասնակցության համար: Շնորհակալ ենք Գավառի համայնքային իշխանություններին ոչ միայն քննարկման կազմակերպմանն ամենագործուն կերպով օժանդակելու, այլև քննարկումներին մասնակցելու համար: Անգնահատելի էր Գավառի համայնքապետարանի, Գավառի «Սարվոր» ՀԿ-ի և Գավառի ակտիվ երիտասարդների դերը քննարկման սցենարների մշակման հարցում, ինչի համար կրկին մեր երախտագիտությունն ենք հայտնում նրանց:

Ամփոփագիր

2024թ. օգոստոսի 13-ին Գավառ խոշորացված համայնքի շուրջ 80 բնակիչներ հավաքվել էին մեկ հարկի ներքո՝ մասնակցելու համահամայնքային երիտասարդական քննարկման:

Մասնակիցները քննարկեցին Գավառ խոշորացված համայնքի, մասնավորապես, երիտասարդների կարիքներից բխող զարգացման վեց ծրագիր, որոնք ՄԶՄԿ-ն մշակել էր Գավառի համայնքապետարանի, Գավառի «Սարվոր» ՀԿ-ի և համայնքի ակտիվ երիտասարդների հետ սերտ համագործակցությամբ: Ծրագրերի առավել ընդհանրական գաղափարները դրված էին համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում, իսկ համայնքապետարանի և համայնքի երիտասարդների հետ արդյունավետ աշխատանքի շնորհիվ դրանք ստացան խիստ շոշափելի և պատկերացնելի ծրագրային առաջարկների տեսք: Հենց դրանք էլ մեծ քննարկման հիմնական թեմաներն էին:

Քանի որ «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի նպատակներից է խթանել երիտասարդների մասնակցությունն իրենց վերաբերող որոշումների կայացմանն ամենատարբեր մակարդակներում և ըստ ծրագրի առանցքային մոտեցման՝ Երիտասարդների դրական զարգացման հայեցակարգի՝ երիտասարդ-մեծահասակ երկխոսությունը երիտասարդների լսելի լինելու և համայնքում նրանց արդյունավետ ներգրավման կարևորագույն գրավականներից է, Գավառի համահամայնքային քննարկմանը մասնակցեցին թե՛ երիտասարդներ, թե՛ մեծահասակներ ու տարեցներ:

Քննարկումը տեղի ունեցավ յուրահատուկ ձևաչափով, որը 2004թ. տեղայնացվել և կիրառվում է ՄԶՄԿ կողմից Հայաստանի տարբեր համայնքներում: Ընտրված ձևաչափը համայնքի բնակչության տարբեր խմբերը ներկայացնող քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում անմիջականորեն և արդյունավետ կերպով մասնակցել քննարկումներին, արտահայտել իրենց կարծիքն ու մոտեցումները և բարձրաձայնել իրենց մտահոգող խնդիրները: Նույն դահլիճում կլոր սեղանների շուրջ մասնակիցները քննարկեցին հետևյալ գաղափարները.

- **Էթնոզբոսաշրջության զարգացումը Գավառում. ամենամյա «Հովվի փառատոն»:**
- **Կարիերայի կենտրոնի ստեղծում:**
- **Գավառի «Տուրիստական այցեգրքի» հրապարակում:**
- **Փառատոնների քաղաք Գավառ. կարողությունների զարգացում:**
- **Երիտասարդների համար մարզաառողջարանային համալիրի հիմնում:**
- **Նոր երիտասարդական կենտրոնի հիմնում:**

Այս քննարկումները սկզբից մինչև վերջ վարեցին սեղանավարները, ովքեր Գավառի ակտիվ երիտասարդներ էին և նման դերակատարման համար անհրաժեշտ հմտությունները ստացել էին վերապատրաստման ծրագրի շրջանակներում:

Համահամայնքային քննարկման ընթացքում հնչած մտքերը նաև երիտասարդ գրառողների կողմից հատուկ հակիրճ գրառումների տեսքով մուտքագրվեցին քննարկման ծրագրի մեջ: Դրանք հայտնվում էին մեծ էկրաններին ու տեսանելի էին բոլոր մասնակիցների համար՝ այսպիսով ապահովելով համաժամանակյա մտքերի փոխանակում քննարկման մոտ 80 մասնակիցների միջև:

Քննարկման ընթացքում հնչած մտքերն ամփոփվեցին ավելի քան 430 գրառումներով, որոնք լավ հիմք են հետագայում բազմակողմանիորեն վերլուծելու համայնքի բնակչության, հատկապես երիտասարդության կարծիքներն ու մտորումները զարգացման ծրագրերի և առաջնային խնդիրների շուրջ: Քննարկումն ամփոփվեց քվեարկությամբ, որի միջոցով յուրաքանչյուր մասնակից իր դիրքորոշումը հայտնեց՝ առաջնահերթություն տալով առաջարկված ծրագրերից մեկին:

Ըստ քվեարկության արդյունքների՝ մասնակիցների մոտ 30%-ն առավել առաջնահերթ համարեց Երիտասարդական մարզաառողջարանային համալիրի ստեղծման ծրագիրը՝ միաժամանակ այդ գաղափարը հարստացնելով ստեղծագործական և իրատեսական նոր լուծումներով:

Քննարկմանը ներկա էին նաև ՀՀ ԿԳՄՍՆ Երիտասարդության հարցերի վարչության, ինչպես նաև Գավառի համայնքապետարանի ներկայացուցիչները:

Գավառ խոշորացված համայնքի բնակիչների երկխոսության և բանավեճի արդյունքներն ամփոփված են սույն փաստաթղթում և բավականին վստահելի տեղեկությունների աղբյուր են Գավառի համայնքային

իշխանությունների, բոլոր որոշում կայացնողների համար՝ հասկանալու համայնքի զարգացման ծրագրում տեղ գտած ուղղությունների առաջնահերթությունների ընկալումը համայնքի բնակիչների կողմից:

1. Համահամայնքային քննարկումների ձևաչափը

Համահամայնքային քննարկման (Town Hall Meeting) ձևաչափը մշակվել և ներդրվել է ՄԶՄԿ կողմից 2004 թվականին, հանրային որոշումների կայացմանը քաղաքացիների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով: Իր տեսակի մեջ եզակի մասնակցային ժողովրդավարության այս ձևաչափը մշակվել է «Ամերիկան խոսում է» (America Speaks) կազմակերպության փորձի հիման վրա, որը մշակել է այս ձևաչափի մեթոդաբանական սկզբունքները և դրանք առ այսօր հաջողությամբ կիրառում է ԱՄՆ-ում:

Որոշում կայացնողները հաճախ դժվարանում են գնահատել հանրային շահերի կենտրոնում գտնվող այս կամ այն խնդրի վերաբերյալ քաղաքացիների մեծամասնության կարծիքներն ու ընկալումները: Ավելին, նման իրավիճակում քաղաքացիները, հատկապես երիտասարդները ևս օտարվում են հանրային կառավարման գործընթացից և հակված չեն մասնակցել հանրային կյանքին: Արդյունքում, արատավոր շղթան փակվում է՝ մարտահրավեր նետելով ժողովրդավարությանը երկրում:

Համահամայնքային քննարկումների գործընթացը հնչեցնում է քաղաքացիների ձայնը, լսելի դարձնում նրանց կարծիքներն ու մոտեցումները հանրային որոշումների կայացման գործում՝ հանրային կարևորագույն խնդիրների վերաբերյալ հասարակության անդամների կամքն ու դիրքորոշումը կառավարման ղեկը ստանձնած գործիչներին անմիջականորեն հայտնելու հնարավորություն ընձեռելու միջոցով: Յուրաքանչյուր քննարկում ապահովում է բազմակարծությունը՝ գործընթացում հարյուրավոր քաղաքացիների միաժամանակյա ընդգրկման, քաղաքացիների արտահայտած կարծիքների անհապաղ և արդյունավետ ամփոփման շնորհիվ:

Ձևաչափի համեմատական առավելություններն են, մասնավորապես, հիմնախնդրի վերաբերյալ կարծիքների վերուղղումը, արդյունավետ մասնակցությունը՝ հնչած որևէ միտք չի անտեսվում, քննարկումների շարունակականությունը, գերակայությունների հստակ առանձնացումը: Ձևաչափի հաջող կիրառման հիմնական գրավականներն են, մասնավորապես, բազմակարծության ապահովումը յուրաքանչյուր սեղանի շուրջ, որոշում կայացնողների ներգրավումը գործընթացի յուրաքանչյուր փուլում, բարձրորակ բովանդակության, կառուցվածքի և ընթացքի ապահովումը, գործընթացի ազդեցությամբ կատարվող իրական փոփոխությունները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը խարսխված է քաղաքացիների միջև երկխոսության և կարծիքների փոխանակման վրա՝ ի հակադրություն երկարաշունչ ելույթների, հարցուպատասխանի կամ զեկուցումների: Կլոր սեղանի շուրջ քննարկումներին, ձայնի հավասար իրավունքով, մասնակցում են հասարակության տարբեր խմբերը ներկայացնող քաղաքացիներ՝ 10-15 հոգի յուրաքանչյուր սեղանի շուրջ, ովքեր իրենց կարծիքն են արտահայտում քաղաքականության, միջոցների տրամադրման, պլանավորման կամ այլ կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ: Քննարկվող խնդրի վերաբերյալ մասնակիցների իրազեկման պատշաճ մակարդակն ապահովելու նպատակով, նրանց տրամադրվում են հնարավորինս մանրամասն և հավասարակշռված տեղեկություններ խնդրի վերաբերյալ:

Որպես երիտասարդական համահամայնքային քննարկում, այս քննարկման մասնակիցների թիրախ խմբին ներկայացվել են սեռային և տարիքային հատուկ պահանջներ՝ յուրաքանչյուր սեղանի շուրջ, ինչպես նաև ողջ դահլիճում, ապահովելով Գավառ խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերից տարբեր մասնագիտությունների տեր կանանց, տղամարդկանց, երիտասարդների հնարավորինս հավասար կազմ: Քննարկմանը մասնակցում էին հավասար համամասնությամբ՝ 15-35 տարեկան պատանիներ և երիտասարդներ, ինչպես նաև 36-74 տարեկան մեծահասակներ: Մասնակիցների մեջ գերակշիռ թիվ էին կազմում երիտասարդ աղջիկներն ու կանայք (շուրջ 2/3):

Որպես կանոն, յուրաքանչյուր սեղանի շուրջ քննարկումը վարում է բարձր որակավորում ունեցող սեղանավարը (facilitator), ինչն ապահովում է մասնակիցների հետևողականությունը քննարկվող խնդրի շրջանակներում: Սակայն, առաջին անգամ նման քննարկումների պրակտիկայում այն ամբողջովին ղեկավարվում էր ոչ թե արհեստավարժ սեղանավարների ու գրառողների, այլ վերապատրաստված և հատուկ նախապատրաստում անցած՝ Գավառի երիտասարդների և երիտասարդական ՀԿ-ների ներկայացուցիչների կողմից, ում աջակցում էին ՄԶՄԿ արհեստավարժ սեղանավարները: Քննարկումից առաջ Երիտասարդական էքսպո-2024-ի շրջանակներում Հմտությունների լաբորատորիայում ՄԶՄԿ

կողմից անցկացվեց 18-34 տարեկան 17 գավառցի երիտասարդների վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում նրանք ստացան գիտելիքներ ու զարգացրեցին իրենց հմտությունները հատուկ ձևաչափով քննարկումներ վարելու հարցում:

2024 թվականի օգոստոսի 12-13-ին 2024 թվականի երիտասարդական մայրաքաղաք Գավառում տեղի ունեցավ երիտասարդական էքսպո 2024-ը, որի շրջանակներում Գավառի երիտասարդների խմբի (18-22տ.) համար անցկացվեց տեղեկատվա-գործնական վերապատրաստման դասընթաց:
Դասընթացի ընթացքում մասնակիցները սովորեցին վարել համահամայնքային քննարկումներ, ուղղորդել դրանք դեպի երիտասարդական տեսանկյուն, հարցերով բացահայտել տեսակետների և դիտարկումների ավելի մեծ շրջանակ, օգնել քննարկումների մասնակիցներին ներկայացված ծրագրերի առաջնայնություն սահմանել, գրառել հնչած ամենաուշագրավ կարծիքները և այլն: Երիտասարդները ստացան նաև խորհուրդներ, թե ինչպես է ավելի դյուրին քննարկման ընթացքում աշխատել տարբեր տարիքի մասնակիցների հետ:
Վերապատրաստման ընթացքում երիտասարդները ոչ միայն ստացան գիտելիքներ ու զարգացրեցին իրենց հմտությունները հատուկ ձևաչափով քննարկումներ վարելու և ուղղորդելու հարցում, այլև հնարավորություն ստացան փորձարկելու իրենց նոր ունակությունները՝ ղեկավարելով Գավառի համահամայնքային երիտասարդական քննարկումը:

Նման որոշումը պայմանավորված էր «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի հիմքում ընկած Երիտասարդների դրական զարգացման մոտեցմամբ, ըստ որի՝ երիտասարդական ծրագրերում երիտասարդների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու համար անհրաժեշտ է նրանց ոչ միայն հմտություններ տրամադրել, այլև իմաստալից հարթակներ, որտեղ նրանք հնարավորություն կստանան գործնականում կիրառելու այդ հմտությունները և վարպետանալու՝ հիմնվելով սեփական փորձի վերլուծության և մեծահասակների աջակցության վրա[1]:

Ձևաչափի շրջանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում առանձին սեղանների շուրջ ընթացող քննարկումները վերածել ընդհանուր խմբային քննարկման ողջ դահլիճում: Յուրաքանչյուր սեղանի շուրջ արտահայտված մտքերն ու կարծիքները գրանցվում և կենտրոնացվում են անլար համակարգչային ցանցի միջոցով: Յուրաքանչյուր սեղանին ներկա է գրառող, ում պարտականությունն է գրանցել քննարկման մասնակիցների հնչեցրած յուրաքանչյուր միտք և ուղարկել այն գլխավոր օպերատորին, ով ապահովում է ստացված ուղերձների ցուցադրումը քննարկման բոլոր մասնակիցների համար տեսանելի դիրքերում տեղակայված էկրաններին: Քննարկման ավարտին, համակարգչային ծրագրի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է ընձեռվում քվեարկել՝ հօգուտ հստակ ձևակերպված հարցերի շուրջ սեփական դիրքորոշման: Հատկանշական է, որ ողջ խումբը հնարավորություն ունի անդրադառնալ ցանկացած առանձին սեղանի շուրջ հնչեցված մտքերին, ինչպես նաև քվեարկության միջոցով որոշում կայացնողներին հասցնել իրենց դիրքորոշումը խնդրի վերաբերյալ: Քննարկման ավարտին ամփոփվում և հնչեցվում է քվեարկության միջոցով ներկաների արտահայտած ընդհանրական դիրքորոշումը: Որոշում կայացնողները ակտիվորեն ներգրավվում են քննարկմանը՝ մասնակցելով քննարկմանը, դիտելով գործընթացը, ինչպես նաև քննարկման ավարտին արձագանքելով քաղաքացիների հարցադրումներին ու կամարտահայտությանը:

Միով բանիվ, համահամայնքային քննարկման կազմակերպումը պահանջում է. (ա) քննարկման խնդրի հստակեցում և ձևակերպում, (բ) քննարկման համար անհրաժեշտ փորձագիտական տեղեկությունների ապահովում այլընտրանքային տարբերակների տեսքով, (գ) անհրաժեշտ ծրագրային ապահովում, (դ) անհրաժեշտ համակարգչային սարքավորում, (ե) քննարկումների վայրի, պայմանների ու կահավորման ապահովում, (զ) համակարգչային ցանցի կազմակերպում, (է) պատշաճ որակավորում ունեցող սեղանավարների և գրառողների առկայություն, անհրաժեշտության դեպքում՝ նրանց վերապատրաստման միջոցով, (ը) քննարկման մասին քաղաքացիների իրազեկում և մասնակիցների կազմի ապահովում, (թ) քննարկման ընթացքում սպասարկող և տեխնիկական անձնակազմի առկայություն, (ժ) քննարկման արդյունքների ամփոփում, (ի) արդյունքների վերաբերյալ իրազեկում բոլոր շահագրգիռ անձանց: Հավելված 1-ում ներկայացված է համահամայնքային քննարկման տիպական տարածական նկարագիրը:

[1] Երիտասարդների դրական զարգացման մոտեցմանն ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ այս հղմամբ՝ https://www.youthpower.org/positive-youth-development

2. Գավառի համահամայնքային քննարկման իրականացման մեխանիզմը

Գավառ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման՝ երիտասարդներին առաջնահերթ հետաքրքրող ծրագրերի շուրջ համահամայնքային քննարկումների գործընթացի արդյունավետության և ներառականության տեսանկյունից հանրային քննարկման հիմքում դրվել են համայնքային իշխանություններ-հանրային հատված-շահառու երիտասարդներ-փորձագիտական մշակում քառանկյան համագործակցային արդյունքներ՝ **սցենարներ**՝ նպատակ ունենալով հանրային կարծիքը պարզել համայնքային գերակայությունների և երիտասարդության հետաքրքրությունների հատման սեգմենտում: Ավելի պարզ՝ **«սցենարը» համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունները կոնկրետ իրականանալի ծրագրերի վերածած պատկերացումների համառոտագիրն է**, որը թույլ է տալիս մասնակիցներին հասկանալ, թե առկա խնդիրն ինչ քայլերով է առաջարկվում լուծել, սեփական առաջարկներով հարստացնել այդ սցենար-ծրագրերը, այնուհետև իրենց ընտրությամբ առաջնայնություն տալ սեղանին դրված այդ տարբերակներին կամ ընդհանրապես մերժել:

Արդյունքում ստացվում է յուրօրինակ շղթա, որտեղ առկա քաղաքականության փորձագիտական մշակումները սցենարային մեխանիզմով դրվում է քննարկման, տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող համայնքի բնակիչների մտքերով ու զգացումներով հարստացվում, վերլուծվում և դառնում նոր փորձ: Այս տեսանկյունից համայնքային գերակայություններ-սցենարներ-հանրային քննարկում-վերլուծություն-համայնքային գերակայություններ փակ շղթան աշխատեց անխափան:

Գծապատկեր 1. Գավառի համահամայնքային քննարկման իրականացման մեխանիզմը



Քննարկման արդյունքները կարող են հարուստ նյութ պարունակել հետագա վերլուծությունների համար: Միևնույն ժամանակ, սցենարներում ուրվագծված՝ Գավառի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծմանը միտված ծրագրային գաղափարների ընդհանրական պատկերները ոչ միայն միս ու արյուն ստացան համահամայնքային քննարկման արդյունքում, այլև էլ ավելի համոզիչ և գրավիչ կդարձնեն այդ ծրագրերը համայնքի ավագանուն, պետական համապատասխան գերատեսչություններին ու հնարավոր ներդրողներին ներկայացնելու տեսանկյունից՝ հիմքում արդեն ունենալով հանրային լուրջ աջակցություն:

3. Սցենարների նախապատրաստման գործընթացը

Գավառ համայնքի զարգացման 2022-2026 թվականների ծրագրի[2]՝ երիտասարդների խնդիրներին առնչվող տեսանկյունից համակողմանի վերլուծությունը գործընթացի սկիզբն էր: Ծրագիրը, որպես հայեցակարգային փաստաթուղթ, անդրադառնում է երիտասարդությանը մտահոգող խնդիրներին առավել ընդհանրական տեսանկյունից՝ արձանագրելով առկա կարիքներն ու գալիք նախաձեռնությունների գերակայությունները: Հետևաբար, կարիք կար հայեցակարգային դրույթները կոնկրետ, հնարավոր և, որ ամենակարևորն է, իրականանալի ծրագրային գաղափարների վերածել:

Գավառի համայնքապետարանում արդեն իսկ մեծ աշխատանք կար արված կոնկրետ ծրագրերի նախանշման, նպատակադրումների և իրականացման վերաբերյալ պատկերացումների համակարգման ուղղությամբ: Ակնհայտ էր, որ համայնքային իշխանությունները լավ գիտեն երիտասարդներին հուզող խնդիրները և մեծ աշխատանք են տանում այդ ուղղությամբ: Առկա ծրագրային պատկերացումներն այնքան շատ էին, որ հաջորդ փուլով հարկ էր դրանք խաչաձև ստուգել արդեն բուն շահառուների՝ երիտասարդների հետ՝ ցանկը կրճատելու և առաջնահերթություններ սահմանելու համար:

Գավառի «Սարվոր» ՀԿ-ն պատրաստակամորեն ներգրավվեց Գավառի երիտասարդների դիտարկումները և գաղափարների «ներքևից-վերև» շղթան գործի գցելու կարևոր հարցում: Պարզվեց, Գավառի երիտասարդական կազմակերպությունների և ակտիվ երիտասարդների պատկերացումների ու ցանկությունների և համայնքապետարանում մշակվող ծրագրային դրույթների միջև էական խզում չկար:

Վերլուծական, գաղափարների համադրման աշխատանքներն ավարտվեցին 6 ծրագրային առաջարկների՝ սցենարների, մշակմամբ:

3.1. Սցենարներ

Ենթադրվում է, որ քննարկման ներկայացված սցենարներում նկարագրված ծրագրերն իրականացնելու համար համադրելի ռեսուրսներ են պահանջվում, իսկ առկա ռեսուրսներն անսպառ չեն, հետևաբար մասնակիցները ոչ միայն պիտի կարողանային ներկայացված գաղափարների թեր և դեմ կողմերը վերհանել, այլև ընտրություն կատարել՝ սահմանափակ ռեսուրսները առաջին հերթին ո՞ր նպատակին իրենք կուղղեին: Սա, իհարկե, քննարկումը պիտի դարձներ շատ ավելի բարդ ու էմոցիոնալ, և իրականում հենց այդպես էլ եղավ: Ստորև ներկայացված են քննարկման սցենարները:

Սցենար 1. Էթնոզբոսաշրջության զարգացումը Գավառում. ամենամյա «Հովվի փառատոն»

Արդի աշխարհում զբոսաշրջության զարգացման կարևոր միտումներից են ուշադրության ավելացումը էթնիկ առանձնահատկությունների, ավանդույթների և սովորույթների, ապրելակերպի, կենցաղի ու մշակույթի նկատմամբ: Նման զբոսաշրջությունը զարգացման ամուր նախադրյալներ և լայն հեռանկարներ ունի նաև Գավառում՝ պայմանավորված **գավառցիների հարուստ ու բազմազան պատմամշակութային ժառանգությամբ**:

2022 թվականից Գավառ համայնքում տեղի է ունենում «Հովվի փառատոն», որի նպատակն է նպաստել ոչ միայն մոռացված ավանդույթների, սովորույթների, ծիսակարգերի և ճաշատեսակների վերհանմանը, այլև երիտասարդների շրջանում դրանց հանդեպ հետաքրքրության բարձրացմանը: 2022-ին «Հովվի փառատոնն» ամբողջովին նվիրված էր **սարվորներին՝ հովիվներին**: Մեկ վայրում ցուցադրվում էր սարվորների կյանքն ու կենցաղը՝ զբոսաշրջիկներին հնարավորություն տալով մասնակցելու վարպետաց դասերի:

Գավառի տարածաշրջանում ապրում են սարվորների 60-ից ավելի ընտանիքներ, որոնց թիվը գնալով քչանում է: Նրանք ունեն շատ հետաքրքիր սովորույթներ, պատմություններ ու կենցաղ: Սակայն նրանց հանդեպ բնակչության հետաքրքրությունը նվազում է: Աստիճանաբար վերացման եզրին են հայտնվում նաև համայնքի տարբեր բնակավայրերին բնորոշ **ավանդույթները, սովորույթները, պատմություններն ու կերակրատեսակները**:

[2] Ծրագիրը հասանելի է Գավառի համայնքապետարանի պաշտոնական կայքում հետևյալ հղումով՝ https://gavarihamaynqapetaran.am/upload/DocFlow/Projects/Fr225201227095185_2022-2026.pdf

2023թ. «Հովվի փառատոնը» եռօրյա էր: Առաջին օրը կազմակերպվեց արշավ դեպի Գավառի տարածաշրջանի կիկլոպյան ամրոցներ, 2-րդ օրը՝ բուն «Հովվի փառատոնն» էր՝ Սբ. Խաչ լեռան ստորոտին, 3-րդ օրը՝ Գավառի փախլավայի օրը: 2024թ-ին նախատեսվում է «Հովվի փառատոնի» ընթացքում ներկայացնել **սարվորներին բնորոշ և շատ անգամ մոռացված կերակրատեսակները**: Նպատակն է նպաստել մոռացված կերակրատեսակների մասին տեղեկատվության տարածմանը, բաղադրատոմսերի պահպանմանը, Գավառի զբոսաշրջային ներուժի հանրայնացմանը և գրավչության մեծացմանը:

Սակայն: **«Հովվի փառատոնն» ամենամյա դարձնելու կարիք կա**, որպեսզի զբոսաշրջային փաթեթներում այն հնարավոր լինի ներառել: Տեղացի և արտասահմանցի զբոսաշրջիկները պետք է հստակ իմանան, որ այսինչ ամսի այս օրերին հարկ է **ծրագրել այց Գավառ՝** մասնակցելու հայտնի «Հովվի փառատոնին»: Տարիների ընթացքում այն հաստատ կարող է դառնալ զբոսաշրջային Գավառի այցեքարտերից մեկը և դեպի տարածաշրջան զբոսաշրջիկների հոսքերի ավելացման կարևոր խթան:

Հովվի փառատոնը ամենամյա դարձնելու ծրագրին միանշանակ կողմ արտահայտվելը, անշուշտ, ողջունելի է, սակայն մենք հորդորում ենք այս և հաջորդ 4 ծրագրերը դիտարկել մեկ համատեքստում, որպեսզի քննարկման ավարտին հնարավոր լինի պատասխանել հարցին՝ «***Որի՞ց սկսել***»: Չէ՞ որ բյուջետային միջոցներն անսպառ չեն, և հնարավոր չէ բոլոր կարևոր գաղափարներն իրականություն դարձնել միաժամանակ: Պետք է կարողանալ **ընտրել առաջնահերթությունը**:

Սցենար 2. Կարիերայի կենտրոնի ստեղծում

*«Գավառ համայնքում սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող խոչընդոտներից ամենա-առաջնայինը **աշխատատեղերի բացակայությունն** է: Չկան գործող հիմնարկ-ձեռնարկություններ, իսկ գործող մասնավորներն էլ բավարար չեն գոնե իրավիճակը քիչ թե շատ մեղմելու համար: Մասնավոր ներդրողների համար համայնքը նպաստավոր պայմաններ չունի /շենքեր, ենթակառուցվածքներ, հիմնական միջոցներ՝ տրանսպորտ, գույք և բնակլիմայական պայմաններ/: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, հողագործությամբ և առևտրով, որոնք արդեն տարիների ընթացքում դարձել են ոչ արդյունավետ և ասպիճանաբար հետ են մղվում»*

Գավառ համայնքի հնգամյա զարգացման ծրագիր 2022-2026թթ.

Աշխատատեղերի սղության գերխնդրի պայմաններում Գավառ համայնքը բախվում է զգալի մարտահրավերների **երիտասարդների և կանանց կարիերայի** վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու հարցում:

Առկա մասնագիտությունների, շուկայի պահանջների և հմտությունների զարգացման հնարավորությունների մասին տեղեկատվության սահմանափակ հասանելիությունը խանգարում է անհատներին կարիերայի **օպտիմալ ընտրություն կատարել**: Ուղղորդման այս բացակայությունը հաճախ հանգեցնում է նրան, որ երիտասարդներն ու կանայք ընտրում են մասնագիտություններ, որոնք այնքան էլ չեն համապատասխանում իրենց կարիքներին կամ աշխատաշուկայի պահանջներին: Խնդիրը լուծելու ջանքերը սահմանափակ են, երբ կարիերայի խորհրդատվական հատուկ ծառայությունները և մասնագիտական վերապատրաստման **ծրագրերը թիրախային խմբերի համար խիստ անբավարար են**:

Անշուշտ, ներկայում որոշակի բարելավում կա մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ իրազեկության բարձրացման և հատուկենտ աջակցության ծառայությունների տրամադրման հարցում: **Աճում է կարիերայի ուղղորդման և հմտությունների զարգացման կարևորության ճանաչումը**: Սակայն ճիշտ որոշումներ կայացնելու համար բավարար տեղեկատվության, ռեսուրսների և աջակցության հասանելիությունը մնում է սահմանափակ:

Այսօր ավելի ու ավելի ակնհայտ է դառնում, որ **համակարգված և կայուն միջամտություններ են անհրաժեշտ**: Գավառ համայնքի **երիտասարդներն անչափ կարևորում են կարիերայի կենտրոնի ստեղծումը**, քանի որ այն կնպաստի Գավառ համայնքի երիտասարդների և կանանց՝ աշխատաշուկային և իրենց կարողությունների համապատասխան մասնագիտության կողմնորոշման ձևավորմանը:

Կարիերայի կենտրոնի ստեղծումը կարևոր է ոչ միայն ապագա ուսանողների, այլև կանանց ու աղջիկների, ինչպես նաև գործազուրկների համար, ովքեր ունեն **ուղղորդման և տարբեր մասնագիտական վերապատրաստումների կարիք:** Կենտրոնը կարող է դառնալ **գործատուների հետ համագործակցության** լավ հարթակ, և ներկա իրողությունների պայմաններում՝ գավառցիների համար հասանելի աշխատաշուկայի ընդլայնման լոկոմոտիվ **ժամանակակից թվային հարթակներում**:

Սցենար 3. Գավառի «Տուրիստական այցեգրքի» հրապարակում

Մենք արդեն քննարկեցինք իրողությունը, որ Գավառն իր աշխարհագրական դիրքով, պատմամշակութային և ազգագրական առանձնահատկություններով զբոսաշրջային կենտրոն դառնալու լավ հնարավորություններ ունի: Բայց հնարավորությունները հետևողական աշխատանքով իրացնելու կարիք ունեն: **«Զբոսաշրջային Գավառը»** համապատասխան ենթակառուցվածքների, զբոսաշրջային ուղիների, հյուրանոցների, ռեստորանների, ժամանցի վայրերի, այլ զբոսաշրջային կենտրոնների հետ համագործակցության և շատ ու շատ այլ համակարգված ջանքերի կարիք ունի: Այո, շատ բան կա անելու, բայց ճանապարհն անցնում է քայլ անողը: Ուրեմն ինչի՞ց սկսել:

Գավառի համայնքապետարանում հավատում են, որ, համայնքի **զբոսաշրջային հնարավորությունները լավագույնս հանրահռչակելով** և լայնորեն ներկայացնելով, միանգամից մի քանի խնդիր կարող են լուծել.

- սկսել գրավել զբոսաշրջիկների և զբոսաշրջային մասնագիտացված բիզնեսի ուշադրությունը Գավառի առավելությունների հանդեպ,
- տեսանելի դարձնել Գավառի զբոսաշրջային ապագայում ներդրումներ կատարելու առավելությունները գործարարների համար:

Որպես առաջին քայլ առաջարկ կա հավաքել, մշակել ողջ տեղեկատվական նյութը և հրապարակել ժամանակից պահանջներին բավարարող **եռալեզու «Տուրիստական այցեգիրք»**: Շատ համայնքներ ունեն իրենց մասին պատմող տեղեկատվական գրքեր, սակայն Գավառ համայնքը դեռևս չունի: Այն կարող է յուրահատուկ այցեքարտ դառնալ համայնքի համար՝ ներկայացնելով Գավառի զբոսաշրջային ռեսուրսների ու տեսարժան վայրերի ողջ հարստությունը:

«Տուրիստական այցեգրքում» ներկայացված կլինեն ոչ միայն զբոսաշրջային վայրերը, այլև այն կունենա ընդգծված **տեղեկատվական բաղադրիչ**: Կընդգրկվեն տնտեսական օբյեկտները, տեղեկատվություն ենթակառուցվածքների, բնակչության և հայտնի մարդկանց մասին: **«Ի՞նչ անել Գավառում»** հարցի պատասխանը այցելուներն առաջին հերթին հենց այստեղ կգտնեն:

Ներհայաստանյան և արտերկրյա բազմաթիվ աշխատաժողովների ու հավաքների են մասնակցում համայնքի ղեկավարները, ներկայացուցիչներն ու երիտասարդները: Միշտ ինչ-որ հետաքրքիր ու ուսուցողական նվերների կարիք է առաջանում: Գիրքը կարող է ծառայել նաև հենց այդ նպատակով՝ նպաստելով համայնքի մասին **տեղեկատվության տարածմանը նաև արտերկրում**:

Եվ, թերևս, ամենակարևորը: Հավաքագրված ու մշակված տեղեկատվական շտեմարանը լավ հիմք կարող է հանդիսանալ Գավառը լայնորեն ներկայացնելու ռազմավարության մեջ առաջ գնալու համար: Հաջորդ քայլը կարող է լինել արդեն շատ ավելի արագ **օնլայն հարթակ ձևավորելը**, որն արդեն շատ ավելի մեծ ընդգրկման հնարավորություններ կունենա: www.visitgavar.am-ը, որպես «Տուրիստական այցեգրքի» ուղիղ շարունակություն, կդառնա համայնքի երիտասարդության սիրված գործիքը հայրենի **Գավառն աշխարհով մեկ ներկայացնելու համար**:

Սցենար 4. Փառատոնների քաղաք Գավառ. կարողությունների զարգացում

Փառատոններ անցկացման համար տաղավարներ և գույք գնելու գաղափարը անընդհատ պտտվողներից է: Եվ դա պատահական չէ: Գավառ խոշորացված համայնքում հաճախակի են տեղի ունենում փառատոններ և տարբեր միջոցառումներ: Սակայն այդ ընթացքում տաղավարները և ձայնային/երաժշտական տեխնիկան **մշտապես վարձակալվում են**՝ հանգեցնելով մեծ ծախսերի և անհարմարությունների:

Գավառը կարող է **հավակնություն ունենալ դառնալու «Փառատոնների քաղաք»**: Վերջին հաշվով ո՛չ Սան Ռեմոն՝ Իտալիայում, ո՛չ Կաննը՝ Ֆրանսիայում կամ Դավոսը՝ Շվեյցարիայում այդ երկրների խոշորագույն քաղաքներից չեն: Նրանք այս կամ այն ոլորտի աշխարհահռչակ կենտրոն են դարձել տասնամյակների հետևողական աշխատանքի շնորհիվ:

Փառատոնների կազմակերպման հարցում Գավառն արդեն իսկ **բավականին փորձ** ու հետաքրքիր պատմություն ունի: Ակնհայտ է, որ նման համակարգային միջոցառումների կազմակերպումը շատ բարդ գործընթաց է, որի ընթացքում լավ գույք ու տեխնիկա ունենալն ուղղակի անհրաժեշտություն է:

Շատ հաճախ վարձակալած տաղավարները լինում են բազմերանգ, իսկ երաժշտական տեխնիկան՝ ոչ այնքան որակյալ, ինչը **հանգեցնում է փառատոնի որակի նվազմանը**: Տաղավար վրանները նաև արագ մաշվածության են ենթարկվում: Հաճախ լինում է այնպես, որ վարձակալած վրանը՝ քամու կամ դրա հետ անզգույշ վարվելու պատճառով վնասվում է, որի ծախսերն ընկնում է վարձակալողի վրա:

Այս խնդիրները հաշվի առնելով է, որ Գավառի համայնքապետարանում փառատոնների և միջոցառումների կազմակերպումը խթանելու նպատակով ավելի կայուն և **մնայուն գույքի ձեռքբերման և տրամադրման գաղափար** կա:

Անհրաժեշտ է ձեռք բերել թվով **20 փայտե տաղավարներ և 1 ձայնային/երաժշտական համակարգ**՝ հետագայում միջոցառումների/փառատոնների արդյունավետ անցկացման նպատակով: Ոլորտի պատասխանատուները հավատում են, որ համայնքում շարունակական և ամենամյա միջոցառումների/փառատոնների անցկացումը **կբարձրացնի հետաքրքրությունը տարածաշրջանի նկատմամբ**, իսկ տեղական կազմակերպություններին հնարավորություն կտա ներկայացնելու իրենց արտադրանքը՝ ապահովելով համայնք-արտադրող կապի ամրապնդումը:

Ծրագիրը կարևոր է նրանով, որ նպաստելու է փառատոնների արդյունավետության բարձրացմանը, տարածաշրջանի կոլորիտի և անհատական տաղավարներում մշակույթի ու ազգային միջավայրի ներկայացմանը: Որպես **մեծ ճանապարհի առաջին քայլ՝** սա կբարձրացնի նաև տրամադրությունը համայնքում, ավելի ինտեգրված ու բաց լինելու հնարավորություններ կբացի և Գավառի ակտիվ բնակիչների ու երիտասարդների համար նոր գաղափարներով հանդես գալու խթան կհանդիսանա՝ միշտ աչքի առաջ ունենալով Յուրմալայի, Սոչիի ու Վենետիկի օրինակը:

Այս ծրագիրը ևս նախորդների պես դիտարկում ենք մյուսների հետ համեմատության մեջ:

Սցենար 5. Երիտասարդների համար մարզաառողջարանային համալիրի հիմնում

Առողջ ու կրթված հասարակություն կերտելու ճանապարհին անչափ կարևոր է երիտասարդների հետ տարվող աշխատանքը: Այս գաղափարը փաստվում է նաև Գավառի համայնքապետարանի կողմից մշակվող գրեթե բոլոր հայեցակարգային փաստաթղթերում և ծրագրերում: Ցանկությունները մեծ են, սակայն իրականությունն անընդհատ ավելի է բարդանում: Բնակչության, մասնավորապես **երիտասարդների ակտիվ ապրելակերպը** կազմակերպելու համար ենթակառուցվածքների թերզարգացվածությանը ներկայում ավելանում են նաև սմարթֆոններով՝ սոցիալական ցանցերում անսահման ժամանակ անցկացնելու հակաառողջական միտումները: Հետևաբար դրված նպատակի ուղղությամբ կարիք կա շատ ավելի մեծ ջանքեր գործադրել:

Իրականությունն այն է, սակայն, որ համայնքի տարածքում ներկայում բացակայում են մարզական, հատկապես մարզաառողջարանային համալիրներն ու կենտրոնները, իսկ երիտասարդները

բարձրաձայնում են ոչ միայն մարզական տարածքների, այլև **առողջարանային համալիրների և լողավազանի կարևորությունը**:

Կարիքների գնահատման քննարկումներում Գավառի երիտասարդները այս երկու առաջնահերթություններն են հաստատապես առաջ քաշում՝ 1. երիտասարդների համար ժամանցի կենտրոններ/հնարավորություններ, 2. մարզաառողջարանային համալիր՝ փակ լողավազանով:

Բացի հանրային առողջության տեսանկյունից կարևորությունը, համայնքում շատ են այն երիտասարդները, որոնք ունեն առողջական խնդիրներ: Նրանց թիվը հատկապես մեծացավ 2020թ. պատերազմից հետո: Նման երիտասարդների համար մարզաառողջարանային համալիրի առկայությունը կենսական նշանակություն ունի:

Ահա այս նկատառումներից ելնելով է, որ Գավառի համայնքապետարանում առաջ է քաշվել **երիտասարդների մարզաառողջարանային համալիր ստեղծելու** միտքը: Նպատակն է կառուցել մարզաառողջարանային համալիր՝ հագեցած ժամանակակից մարզասարքերով: Այն ապահովելու է բնակիչների ակտիվ հանգիստը՝ առողջ ապրելակերպի ժամանակակից և որակյալ պայմաններում և հնարավորություն է տալու նաև **օլիմպիական մարզական մրցույթների կազմակերպման** համար (Օլիմպիական մարզական մրցույթներն ու լողավազանները աշխարհի ամենաընդարձակ ընթացիկ օլիմպիական մարզաձևերն են, ինչպես նաև տարբեր երկրներից ամենաշատ միջոցառումներն ու մասնակիցներն են ապահովում):

Կրկին, «Երիտասարդների համար մարզաառողջարանային համալիրի հիմնում» ծրագիրը ևս կարիք կլինի քննարկել մյուս ծրագրերի հետ առավել կամ պակաս կարևորության/հրատապության համատեքստում:

Անշուշտ բացի քննարկման դրված ծրագրային գաղափարներից մասնակիցները կարող են առաջ քաշել **բոլորովին նոր գաղափար** և հիմնավորել դրա անհրաժեշտությունը:

Սցենար 6. Նոր երիտասարդական կենտրոնի հիմնում

Նախորդ ծրագրերի շրջանակում մենք արդեն նշեցինք, որ առկա է հայեցակարգային մոտեցում, որ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման, մշակութային ժառանգության պահպանման, կրթական ու գիտական ներուժի հզորացման գործընթացներում համայնքի երիտասարդությունը՝ որպես հսկայական **ներուժ** ունեցող ռեսուրս, ունի անգնահատելի դեր ու նշանակություն: Սակայն այդ ներուժը զարգացնելու, և ի նպաստ համայնքի ու նրա բնակիչների այդ ռեսուրսն օգտագործելու համար բավարար պայմաններ առկա չեն:

Խնդիրների հիմնական մասը վեր հանելու ու դրանց համար լուծումներ գտնելու մտադրությամբ 2023 թ. դեկտեմբերի 13-ին համայնքի ավագանին իր թիվ 334-Ա որոշմամբ հաստատել է «Գավառ համայնքի երիտասարդական ոլորտի զարգացման 2024 թվականի գործողության պլանը»: Պլանում ներկայացված բազմաթիվ հիմնախնդիրների ու կարիքների համար առանձնացված են մի շարք առաջնահերթ գործողություններ, որոնցից մեկով առաջարկվում է կազմակերպել **երիտասարդական կենտրոններ և համատեղ աշխատանքային տարածքներ**, որոնք պետք է դառնան հանդիպումների, վերապատրաստման և մշակութային միջոցառումների վայրեր:

Այստեղ պետք է նշել, որ «Գավառ համայնքի 2022-2026 թթ. հնգամյա զարգացման ծրագրում» ևս ամրագրված էր, որ պետք է հիմնադրվի և շահագործվի երիտասարդական կենտրոն, քանի որ համայնքում բացակայում է նման կենտրոնը, երիտասարդությունը չունի հավաքատեղի: Հենց այս հիմնախնդրի լուծման համար «Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի ու Գավառի համայնքապետարանի եռակողմ համագործակցության շնորհիվ 2022թ. Գավառում հիմնվել է բաց երիտասարդական կենտրոն՝ «Գավառի երիտասարդների տունը»: Այս կենտրոնի նպատակն է՝ բարձրացնել Գավառ խոշորացված համայնքի երիտասարդների քաղաքացիական ակտիվությունն ու բարեկեցությունը՝ երիտասարդական աշխատանքի իրականացման միջոցով: Չնայած գործունեության կարճատև պատմությանը, կենտրոնն արձանագրել է բավական լուրջ արդյունքներ ու ձեռքբերումներ՝ պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանք տրամադրելով տարեկան ավելի քան 550 շահառուի:

Սակայն, «Գավառի երիտասարդների տուն» կենտրոնն, իր առաքելությունից ու մեթոդաբանությունից ելնելով, համայնքահեն ծառայություններ է մատուցում միայն 13-17 տարեկանների համար, իսկ 18-35 տարեկան երիտասարդների համար նման ծառայությունները համայնքում դեռ բացակայում են:

2024 թ. հունվարի 1-ի դրությամբ Գավառ համայնքի բնակչության թիվը կազմել է շուրջ 48 600 մարդ , որից շուրջ 12 000-ը (մոտ 25%-ը, կամ չորս բնակչից մեկը) 18-35 տարեկան երիտասարդներն են:

Հենց այս երիտասարդների ներուժի զարգացման նպատակով էլ առաջ է քաշվել երիտասարդական կենտրոն հիմնելու գաղափարը: Պետք է նշել, որ նման կենտրոնների հիմնումը նաև պետության առաջնահերթությունների թվում է և այս հարցի շուրջ հնարավոր է համայնք-պետություն համագործակցություն:

4. Գավառի համահամայնքային երիտասարդական քննարկումը

Գավառի համահամայնքային երիտասարդական քննարկումը տարբերվում էր մինչ այդ այլ մարզերում տեղի ունեցած նմանօրինակ քննարկումներից: Անշուշտ, Գավառի քննարկումն էլ արդյունավետ էր քննարկման որակի, երիտասարդների ձայնը լսելի դարձնելու տեսանկյունից: Այստեղ էլ մասնակիցները ոչ միայն ազատ ու անկաշկանդ արտահայտվելու հնարավորություն ունեցան, այլև տեղում տեսան, որ համայնքային իշխանությունների ներկայացուցիչները իրենց հետ հավասար լուծումներ են փնտրում և քաջալերում: Կրկին՝ քննարկումը ընդգրկուն էր, ներառական և իսկապես ոգևորող: Սակայն այս ամենից բացի, Գավառի համահամայնքային քննարկման «տերն ու տիրակալը», այսինքն սեղանավարներն ու գրառողները, հենց իրենք՝ Գավառի երիտասարդներն էին, ոչ թե, ինչպես սովորաբար է լինում, տարիների հարուստ փորձ ունեցող հրավիրյալ պրոֆեսիոնալները: Ստացվել էր մի միջավայր, որտեղ Գավառի սոցիալ-տնտեսական զարգացման՝ երիտասարդական ուղղվածության ծրագրերը համակողմանիորեն քննարկում էին Գավառի երիտասարդներն ու մեծերը, և այդ ամենն ուղղորդում էին երիտասարդները:

Լավ մտածված քննարկման նյութը և երիտասարդ սեղանավարները կարողացան ապահովել, որ շուրջ 2.5 ժամ երիտասարդներն ու ավագ սերնդի ներկայացուցիչները կտրվեին իրենց առօրյայից և ամբողջովին մտնեին Գավառի երիտասարդներին հուզող խնդիրների դաշտ, միասին առաջնահերթություններ սահմանեին և արդյունավետ լուծումներ առաջարկեին: **Առաջին, չորրորդ և հինգերորդ** սցենարները մասնակիցների կողմից այնքան շատ կարևորվեցին քննարկման ընթացքում, որ մինչև քվեարկության ավարտը ոչ ոք չէր կարող կանխատեսել, թե հատկապես որ սցենարն առավելագույն քվե կհավաքի:



«Այսպիսի հանդիպումները ես շատ դրական եմ գնահատում, որովհետև դրանց շնորհիվ մենք նաև ավելի տեղեկացված ենք դառնում»,- պնդում էր քննարկման մասնակիցներից մեկը՝ նկատի ունենալով, որ համահամայնքային քննարկումն իրենց թույլ է տալիս ոչ միայն սեփական դիրքորոշումը հայտնել առկա զարգացման ծրագրերի և նրանց առաջնահերթությունների վերաբերյալ, այլև տեղեկանալ, թե ինչ նախաձեռնություններ ու գաղափարներ կան համայնքում և, ընդհանրապես, ինչ են մտածում և ինչ պատկերացումներ ունեն համայնքի մյուս բնակիչներն այդ ամենի վերաբերյալ: Սրահում քննարկման ողջ ընթացքում շատ աշխատանքային միջավայր էր տիրում, երիտասարդները և մեծահասակները միմյանց լրացնելով մանրազնին քննարկեցին բոլոր ծրագրերը և արտահայտեցին հարյուրավոր դիտարկումներ ու կարծիքներ:

Քննարկման ընթացքը և հնչած մտքերի արձանագրումն ապահովեցին Երիտասարդական էքսպո 2024-ի շրջանակներում վերապատրաստված գավառցի ակտիվ երիտասարդները, ովքեր որպես սեղանավարներ ու գրառողներ հմտորեն գործեցին իրենց համար մշակված ցուցումների շրջանակում (տես Հավելված 2):

4.1. Գավառի համահայնքային քննարկման արդյունքներն՝ ըստ սցենարների

Հմտությունների լաբորատորիայում նախապես վերապատրաստված երիտասարդ գրառողները Գավառի քննարկման ընթացքում արձանագրել են մասնակիցների՝ ավելի քան 430 դիտարկում: Քննարկման դրված նյութի և դիտարկումների համառոտ ամփոփումը կոնկրետ ծրագրերով ունի հետևյալ պատկերը.

Սցենար 1. Էթնոզբոսաշրջության զարգացումը Գավառում. ամենամյա «Հովվի փառատոն» *- կողմ՝ 20%*

- *Այս փառատոնն իսկապես մեր ավանդույթները պահպանելուն նպաստելու հարցում մեծ ներուժ ունի:*
- *Փառատոնը սարվորներին հնարավորություն է տալիս իրենց մշակույթը ներկայացնելու, իսկ համայնքին՝ իր տեսարժան վայրերի մասին իրազեկելու:*
- *«Հովվի փառատոնը» շատ ավելի էական դեր կունենա, եթե արվի ոչ միայն տեղական ուժերով. սա պետք է արվի պետականորեն, ներառվի օրացույցի մեջ, ստանա համապետական հնչեղություն:*

Այս ծրագրի դիտարկումը շատ արագ դուրս եկավ զուտ ծրագրային շրջանակներից և դարձավ **Գավառի ավանդույթների պահպանման** կարևորության և դրա ճանապարհներին ուղղված լայն քննարկում: Բոլորն էին համաձայն որ այս հարցում էական է երիտասարդների դերն ու մոտիվացիան, իսկ երիտասարդներն ամենևին էլ դեմ չէին դառնալ սիրելի համայնքի հարուստ ավանդույթների պահպանման առաջամարտիկներ: «Հովվի փառատոնի» գաղափարի մասով առանձին ուշադրության արժանացան դրա պարբերականությանը, ընդգրկմանը, հանրահռչակմանը, բովանդակային հարստացմանը և այլ հարցեր: Եղան կազմակերպչական բնույթի, փառատոնի ընթացքում սարվորների դերի ավելացմանը, հյուրերի գործնական մասնակցության ապահովմանը, ենթակառուցվածքային խնդիրներին ու հարմարավետությանն առնչվող շատ օգտակար առաջարկներ:

*«Կարելի է մտածել նաև **«Հովվի փառատոնը» «Սարվորի տոնի»** վերածելու գաղափարի մասին»,-* վերջում մասնակիցներից մեկը եկավ այսպիսի եզրահանգման՝ կետ առ կետ լսելով «Հովվի փառատոնի» կատարելագործման մասին ներկաների բազմաթիվ ուշագրավ պատկերացումները:

Սցենար 2. Կարիերայի կենտրոնի ստեղծում - *կողմ՝ 9%*

- *Շատ պետք է, անգամ պարտադիր է: Երիտասարդները պրոֆեսիոնալ իրազեկման մեծ կարիք ունեն:*
- *Ես երիտասարդ եմ և չունեմ նախընտրած մասնագիտություն: Կարծում եմ՝ կարիերայի կենտրոնը կարող է ուղղորդել ինձ:*
- *Իսկ ինչու՞ չենք ավելի լայն նայում հարցին. կենտրոնը կարող է նաև առաջարկել բիզնես գաղափարներ նրանց, ովքեր ուզում են գործ սկսել:*

Կարիերայի կենտրոնի ստեղծման գաղափարը համահամայնքային քննարկման մասնակիցները դիտարկեցին մի քանի տեսանկյունից. կարևորություն, պահանջվածություն, աշխատատեղերի առկայություն, վերապատրաստում և կենտրոնի կողմից առաջարկվելիք բովանդակության նպատակահարմարություն, **ավագ դպրոց-մասնագիտական կրթություն-գործատու շղթա**, աշխատաշուկայի գավառյան առանձնահատկություններ:

Մասնակիցները համաձայն էին, որ նման կառույցի անհրաժեշտությունը կա, պնդում էին, որ մասնագիտական կողմնորոշման հարցում երիտասարդների հետ պետք է աշխատել արդեն ավագ դպրոցից սկսած, խիստ կարևորում էին արագ փոփոխվող իրականության պայմաններում Գավառում **վերապատրաստման որակյալ հնարավորություններ** ունենալը, առաջարկում էին թվային աշխարհում վաստակելու նոր հորիզոններ բացել իրենց համայնքի երիտասարդների համար և այլն: Իհարկե, ինչպես այլ ծրագրերի, այնպես էլ այս դեպքում կային մասնակիցներ, ովքեր համարում էին, որ լավ գաղափար է, բայց ավելի առաջնահերթ այլ խնդիրներ ունի Գավառը: Կային նաև ավելի կտրուկ արտահայտվողներ. *«Եթե աշխատատեղ չկա, կենտրոնը բացելու իմաստն էլ չկա»:*

Սցենար 3. Գավառի «Տուրիստական այցեգրքի» հրապարակում - *կողմ՝ 17%*

- *Այցեգրքի ստեղծումը հետաքրքրություն կստեղծի թե՛ զբոսաշրջիկների, թե՛ տեղաբնակների համար: Գավառ համայնքում շատ հետաքրքիր վայրեր կան, որոնց մասին մենք տեղյակ չենք:*
- *Իսկ ես կարծում եմ, որ լավ կլինի և՛ գրքային տարբերակ լինի, և՛ կայք:*
- *Այս ծրագիրն իրականում ծախս չէ համայնքային բյուջեի համար, այլ ներդրում է: Համայնքը ներդրում կանի և այն կարճ ժամանակում հետ կվերադառնա բյուջե:*

Գավառի «Տուրիստական այցեգրքի» հրապարակման ծրագիրն առանձնապես բուռ քննարկման արժանացավ: Այն ավելի ճիշտ նման էր նախաձեռնությունն արդեն իսկ կյանքի կոչող մեծ թիմի մտքային գրոհի, երբ բոլորը **սրտացավորեն իրար են լրացնում** թե ինչպես ավելի հարստացնել բովանդակությունը, ինչպես մատուցել այն, որ ավելի ընկալելի լինի, ինչպես տարածել նյութը, որ շատերին հասնի, և ամեն փուլում անընդհատ առաջարկներ էին հնչում, թե ով ինչով իր կողմից կարող է օժանդակել այդ գործընթացին: Բայց ամենից առավել, կողքից դիտողի համար «Գավառի «Տուրիստական այցեգրքի»

հրապարակում» ծրագրի քննարկումն ավելի շատ նման էր գործնական մտքերի ներքո քողարկված սիրո հավաքական խոստովանության, և այդ սերը **հայրենի համայնքի հանդեպ սերն** էր, որ միավորում էր ներկա բոլոր մասնակիցներին:

Այցեգրքի հրապարակման գաղափարի քննարկումներում մասնակիցները հաճախ էին անդրադառնում արդեն քննարկված՝ «Հովվի փառատոնին», կրկին խոսում Գավառի զբոսաշրջային առավելությունների ու թերությունների մասին: Այս առումով ուշագրավ էր մասնակիցներից մեկի կարծիքը, ով կողմնակից էր նմանօրինակ բոլոր գաղափարները մեկ կենտրոնից առաջ տանելուն. «*Զբոսաշրջության զարգացման ուղղությամբ հատվածային ծրագրերը շատ օգտակար չեն լինի իմ կարծիքով, պետք է ստեղծել տուրիստական կենտրոն, որն էլ կիրականացնի և կհամակարգի բոլոր գաղափարները*»:

Սցենար 4. Փառատոնների քաղաք Գավառ. կարողությունների զարգացում - *կողմ՝ 22%*

- *Ընդհանուր առմամբ այս ծրագիրը լավ է ներկայացված, այս տարի երիտասարդության մայրաքաղաք ճանաչվելը պարտավորեցնում է մեզ ավելի շատ միջոցառումներ կազմակերպել:*
- *Այս ծրագրի համար ռազմավարություն է պետք կազմել, շարունակությունը պետք է կոնկրետ ու տեսանելի լինի: Գույքն ու տեխնիկան գնեցինք, հետո՞:*
- *Փառատոններ իրականացնելը բավականին բարդ է: Մեր Գավառում պետք է օգտագործվի և ավելացվի տաղանդավոր երիտասարդների ներուժը:*

4-րդ սցենարը զբոսաշրջային ուղղվածության ծրագրերից ամենաշատ ձայնը ստացավ քվեարկության ժամանակ: Թերևս, ծրագրում ներկայացված տեսլականն էր նախ և առաջ ոգևորել մասնակիցների, ինչի մասին նրանք արտահայտվում էին: Որպես մեծ երազանքի առաջին քայլ մարդիկ համաձայն էին, որ կարելի է սկսել տեխնիկայի գնումից, բայց գնման աղբյուրի մասին տեսակետները կիսվում էին. մի մասը համարում էր, որ պետք է **բարերարներ ներգրավվել** համայնքի այս կարիքը հոգալու համար, մյուս մասը կարծում էր, որ գնված գույքը փառատոնների ժամանակ օգտագործելուց բացի կարելի է կիրառել նաև դպրոցներում կամ մասնավոր միջոցառումներին վարձով տալ և գումար վաստակել համայնքային բյուջեի համար:

Բայց ամեն ինչից զատ կա մի խնդիր, որ բոլոր զբոսաշրջային ծրագրերի՝ թե 1-ին, թե 3-րդ և թե 4-րդ սցենարների դիտարկման ժամանակ անընդհատ շեշտում էին մասնակիցները, և դա հյուրերի գիշերակացի, **հյուրանոցա-հյուրատնային հնարավորությունների հարցն** է: *«Ինչ էլ քննարկենք, զբոսաշրջային կամ փառատոնների քաղաք դառնալու համար Գավառի թիվ մեկ խնդիրը այցելուների գիշերակացի հարցն է: Առաջինը դա պետք է անենք, դա շղթայական կապված է փառատոնների և մյուս գաղափարների հետ»,-* ինչում էր դահլիճում*:*

Սցենար 5. Երիտասարդների համար մարզաառողջարանային համալիրի հիմնում - *կողմ՝ 30%*

- *Բոլորը սպասում են այս գաղափարի իրականացմանը, առաջին կարևոր քայլը դա կլինի: Մեզ իսկապես պետք են սպորտային տարբեր խմբակներ առողջ ապրելակերպի համար:*
- *Եթե մենք ունենանք համալիր, այն կարող է համագործակցել դպրոցների, մանկապարտեզների հետ:*
- *Մենք պետք է այդպիսի կենտրոն ունենանք, որ տաղանդների բացահայտում կարողանանք անել այնտեղ: Ո՞վ ասաց, որ Գավառի մարզաառողջարանային համալիրից ապագա օլիմպիական չեմպիոններ չեն դուրս գա:*

Սա ամենաշատ ձայն ստացած ծրագիրն էր: Բոլորն էին համաձայն, որ սպորտը կարևոր է, սակայն ոչ բոլորն էին համարում, որ մարդիկ, նաև երիտասարդները, ակտիվորեն կհաճախեն: Հետևաբար, կարևորվեց ոչ միայն համալիր ունենալը, այլև **առողջ ապրելակերպի քարոզչությունը** համայնքում, խրախուսելը, որ շատերն օգտվեն:

Միևնույն ժամանակ մասնակիցները շատ երկար խոսեցին աղջիկների և տղաների մարզասրահների, մասնավորապես լողավազանի՝ իրարից առանձին լինելու անհրաժեշտության, կամ դրա անհնարինության դեպքում՝ ժամային գրաֆիկ և խիստ վերահսկողություն սահմանելու մասին: Անդրադարձ եղավ նաև

մարզահամալիրից օգտվելու ֆինանսական հարցերին, պրոֆեսիոնալ սպորտ- առողջական սպորտ համադրության ապահովման հնարավորությանը, կարևորվեց նաև **սրտացավ մարզիչներ-անձնակազմ ունենալու** անհրաժեշտությունը:

«*Պիտի կարողանանք բարձրացնել լողավազան հաճախելու գրավչությունը, երիտասարդները պետք է պարտադիր լողալ իմանան. հաշվի առնենք, որ Սևանը մեզ մոտ է*»- եզրակացրեց մասնակիցներից մեկը:

Սցենար 6. Նոր երիտասարդական կենտրոնի հիմնում- *կողմ՝ 1%*

- *Երիտասարդական կենտրոնը կնպաստի երիտասարդների զարգացմանը, այն փորձի փոխանակման լավ հարթակ կարող է լինել:*
- *Ամեն բան կախված է, թե ոնց կկազմակերպվի կենտրոնի աշխատանքը. միայն տարածքը չլինի և վերջ: Եթե ամեն բան ճիշտ և գրագետ կազմակերպվի երիտասարդները կգան, ինչու՞ ոչ:*
- *Առանձին կենտրոն ստեղծելու փոխարեն հին կենտրոններում տարիքը պետք է բարձրացվի և վերջ:*

Երիտասարդական կենտրոնի ստեղծման գաղափարին մասնակիցները հիմնականում դրականորեն արձագանքեցին: Շատերն էին համարում, որ կենտրոնը կարող է դառնալ մինչև 35 տարեկան երիտասարդների **զբաղմունքի, զարգացման, միմյանց հետ շփվելու** և տարատեսակ էկրաններից հեռանալու լավ հնարավորություն: Անշուշտ այստեղ էլ կային մտավախություններ, որ երիտասարդներն այդքան էլ ակտիվ չեն լինի մասնակցության հարցում՝ ուսումով, աշխատանքով զբաղված լինելու կամ այս կամ այն կարծրատիպերի պատճառով:

Մասնակիցների մի մասի առաջարկությունն այն էր, որ նոր կենտրոն ստեղծելու և դրա վրա ռեսուրսներ ծախսելու կարիք չկա, այլ կարելի է բարձրացնել արդեն գործող կենտրոնի **տարիքային վերի շեմը** և համապատասխան փոփոխություններ կատարել աշխատանքների կազմակերպման մեջ այնտեղ:

4.2. Սոցիալական երկխոսությունը երիտասարդների և մեծահասակների միջև

Բացի Գավառի համահամայնքային քննարկման ծրագրային արդյունքներից, կարելի է նաև մի շարք եզրահանգումներ անել այդ արդյունքների համեմատական վերլուծության արդյունքում ստացված անուղղակի՝ երիտասարդների և մեծահասակների միջև միջնորդավորված սոցիալական երկխոսության վերաբերյալ: Օրինակ՝ գրեթե բոլոր սցենարների քննարկումներում թե՛ երիտասարդները, թե՛ մեծահասակները պնդում էին ավանդույթների պահպանման կարևորության մասին, համաձայն էին աշխատել և ջանքեր գործադրել Գավառի զբոսաշրջային ապագայի (սցենար 1, 3, 4), երիտասարդների համար իրենց հայրենի քաղաքում զարգանալու և ինքնադրսևորվելու պայմաններ ապահովելու (սցենար 2, 5, 6) կամ համայնքում առկա տարիքով և սեռով պայմանավորված սոցիալական ակնկալիքներն արտացոլող կարծրատիպերի հաղթահարման համար: Սակայն, մի տարբերություն է անընդհատ նկատվում կարծիքներում՝ երիտասարդներն ավելի լավատես են իրենց դիտարկումներում, մինչդեռ երբեմն-երբեմն մեծահասակների կարծիքներում հուսահատություն է արձանագրվում, ինչպես օրինակ՝ երիտասարդների համար մարզահամալիր կառուցելու ծրագրին ի պատասխան հնչած այս կարծիքը՝ «*Էս Գավառից ամենահեռու թեման ա*»:

Միևնույն ժամանակ, նկատելի էր մեծահասակների խրախուսական հորդորները երիտասարդներին ավելի ակտիվ լինել սեփական դիրքորոշումներում և նրանց փորձերը՝ չլինել գերիշխող երիտասարդների դիրքորոշումների վրա: *«Ավագ սերունդը ճնշում է երիտասարդ սերնդին: Դա երևում է նաև մեր այսօրվա քննարկման ժամանակ՝ տարեցների կարծիքը գերակայող է սեղանի շուրջ: Ազա՛տ խոսեք, երիտասարդնե՛ր»:* Երիտասարդների կարծիքներում էլ նկատվում էր մեծահասակների դերն արժևորելու միտում. *«Մենք՝ երիտասարդներս, ունենք մեծերի կարիքը. անհրաժեշտաբար նման խմբերում պետք է ընդգրկել մեծահասակների և խելացի մարդկանց»:*

Խնդիրների լուծման հարցում տրամադրվածությունը

Երիտասարդներ	Ավագ սերնդի ներկայացուցիչներ
Հիմա ակտիվ երիտասարդությունը Գավառում շատացել է, բոլորը կարող են իրենց ծանոթների, ընկերների միջոցով տարածել գիրքը: Համալիրի առկայությունը կոգևորի Գավառի բնակիչներին սպորտով, լողով զբաղվել: Գավառը փառատոնների քաղաք դառնալու մեծ ներուժ ունի: Շատ լավ գաղափար է: Գավառում երաժշտական փառատոնը հաստատ կաշխատի: Եթե գույք և համապատասխան տեխնիկա ձեռք բերենք, դա մեզ կստիպի ավելի հաճախակի կազմակերպել միջոցառումներ: Սա շատ լավ է:	Գավառում ինչ էլ բացվում է, երկար չի աշխատում եկամուտ չապահովվելու պատճառով: «Գավառը փառատոնների քաղաք». սա ուտոպիստական գաղափար է: Փառատոնը ունեցածի ցուցադրումն է, մենք ցուցադրելու ի՞նչ ունենք: Օլիմպիական չեմպիոն չունենք, մրցանակներ չունենք, ֆուտբոլի թիմ չունենք. 1970-ներին ունեինք, կորել է այս ամեն ինչը. մարզադպրոցները փակվեցին, տրադիցիա չկա: Մարզահամալիրը պետք ա երեխաների համար բացվի, որովհետև մեծերը հաստատ չեն գնալու:

Չնայած նախատրամադրվածության այս տարբերություններին, **ավանդույթների պահպանման կարևորության** հարցում, օրինակ, կար միակամություն բոլոր տարիքային խմբերի մոտ, և հավատ, որ ներկա երիտասարդությունը կկարողանա այդ կարևոր գործի շարունակողը լինել:

Գավառի ավանդույթները կարևորելու մասին

Երիտասարդներ	Ավագ սերնդի ներկայացուցիչներ
Կարևոր եմ համարում նման միջոցառումների անցկացումը, որովհետև մեր ավանդույթների պահպանումն իսկապես առաջնային խնդիր է: Ավանդույթները չեն պահպանվում, որովհետև սակավ են փառատոնները մեր համայնքում: Ես ինքս ինքնուրույն google-maps-ում ավելացնում եմ գավառում գործող հաստատությունները: 2023 թվականին ես մասնակցել եմ փառատոնին. կար հստակ ծրագիր, ունեինք մասնակիցներ Եվրոպայից, այլ երկրներից, շատ հետաքրքիր էր բացահայտել Կիկլոպյան ամրոցը: Ունեինք ծրագիր, որը բացահայտում էր քարանձավները. բացահայտել ենք 10 քարանձավ: Փառատոնի ժամանակ հնարավորություն կար մասնակցելու կիթի, ծանոթանալու բուն հովվի կյանքին. դա հետաքրքիր էր: Պետք է իրականացնել ազգային արժեքներ փոխանցող փառատոններ:	Մարդիկ տեղյակ չեն կյանքի շատ կարևոր բաղադրիչներից, օրինակ երիտասարդները տեղյակ չեն, թե ինչպես են պատրաստում պանիր, կարագ և այլն: Անշուշտ, հարց է նաև, թե արդյո՞ք երիտասարդներին դա հետաքրքիր է ընդհանրապես: Մեզ պետք չի քաղաքակրթություն առանց արմատների: Պետք է երիտասարդներն ավելի շատ ներգրավվեն ավանդույթների պահպանման գործում: Վստահ եմ՝ երիտասարդները կկարողանան պահպանել և արժևորել մեր ավանդույթները: Երիտասարդները ոչ միայն կտեղեկանան, նաև կկսեն գնահատել, արժևորել ամենօրյա մթերքները՝ պանիրը, կարագը, երբ տեսնեն, թե ինչքան չարչարանքով են դրանք պատրաստվում: Կորցնում ենք ճաշատեսակներ, որովհետև միջազգային ճանաչում չեն ունենում: Ցանկացած

	քայլ, որ նպաստում է այս խնդրի լուծմանը, ողջունելի է:

Երիտասարդների և մեծահասակների մոտեցումները շատ մոտ էին նաև **երիտասարդներին և նրանց ինքնահիրացմանն** առնչվող քննարկումներում: Թե՛ երիտասարդները, թե՛ մեծահասակները համամիտ էին, որ երիտասարդներն ինքնին կարող է ակտիվ չլինեն, և նրանց հարկավոր է մոտիվացնել, իսկ առավել ակտիվ երիտասարդների շրջանակը հիմնականում անփոփոխ է մնում: Միևնույն ժամանակ, եթե մեծահասակների խոսքում երբեմն թերահավատություն կար, թե որևէ խթան չի օգնի ցանկություն չունեցող երիտասարդին, ապա երիտասարդների մոտ, ընդհակառակը, կար հավատամք, որ իրենք կարող են և հենց իրենք պիտի մշակեն իրենց գործունեությանը միտված կառույցների աշխատանքի տրամաբանությունը և **առաջ գնան իրենց կարիքների բավարարման ճանապարհով**:

Համայնքում **իրենց չիրացնելը, զբաղվածություն չգտնելը, արտագաղթելը** բոլոր ծրագրերի քննարկման ընթացքում անընդհատ հնչեցվող խնդիրներն էին երիտասարդների համար: Բոլորը համակարծիք են, որ երիտասարդները կրթության ու զբաղվածության, ժամանցի ու առողջ ապրելակերպի խնդիրների են բախվում և, եթե անգամ գիտակցում են խնդիրների մասին, դժվարանում են լուծել թե՛ համապատասխան հնարավորությունների բացակայության, թե՛ արմատացած սեռա-տարիքային կարծրատիպերի բախվելու պատճառով: Եվ մասին բարձրաձայնում էին թե՛ մեծահասակները, թե՛ երիտասարդները:

Երիտասարդների և համայնքում նրանց ինքնահիրացման մասին

Երիտասարդներ	Ավագ սերնդի ներկայացուցիչներ
Մենք ունենք խնդիր, որ ՀԿ-ների երիտասարդական տների անդամները հիմնականում նույն երիտասարդներն են, նույն մարդիկ են ներգրավված շուրջ երկու, երեք տարի է: Իմ կարծիքով 18 տարեկանից բարձրերը հետաքրքրված չեն լինելու այս կենտրոնով, որովհետև այդ տարիքային խմբի երիտասարդները կա՛մ դասի են, կա՛մ աշխատում են: Կենտրոնը պետք է հենց երիտասարդների կողմից ձևավորված հայեցակարգ ունենա՝ հիմնված լինելով երիտասարդների կարիքների վրա:	Երիտասարդներին իրար գլուխ հավաքելը օգտակար գործ է: Պետք բոլորը իրար հետ շղթայված լինեն, որ նոր մտքեր ծնվեն: Ինչպես ասում են՝ որ արևը շողա: Առաջինը պետք է երիտասարդներին սովորեցնել կարդալ: Շատ կարդալ: Հիմնական մինուսը կլինի այն, որ երիտասարդները պասիվ կլինեն. մոտիվացնող բան է պետք մտածել: Եթե երիտասարդը ցանկություն ունի որևէ ծրագիր գտնելու ու մասնակցելու, ապա, հավատացնում եմ ձեզ, անպայման կգտնի անկախ նման կենտրոնների գոյությունից:

Երիտասարդներն ու մեծահասակները, ներկայացված ծրագրերը քննարկելիս, անընդհատ վերադառնում էին գենդերային խնդիրներին, **սեռով և տարիքով պայմանավորված տարբերություններին** կամ, ինչպես իրենք էին անընդհատ շեշտում, **բնակչության մեջ առկա կարծրատիպերին**: Բոլորն էին պնդում, որ այս հարցերում շատ մեծ խնդիր կա, և բազմաթիվ լավ գաղափարներ կարող են ուղղակի կյանքի չկոչվել միայն նման իրողությունների պատճառով: Այս թեմայի շուրջ դիտարկումների նկատելի տարբերությունը հիմնականում մոտեցման մեջ էր. մեծահասակները խնդիրը և դրա դրսևորումների մասին խոսում են որպես տխուր, բայց արմատացած երևույթ, մինչդեռ երիտասարդների մոտ կար դրա դեմ պայքարելու ցանկություն, պատրաստակամություն՝ անկախ իրենց անձնական փորձի մեջ արդեն իսկ արձանագրված անհաջողություններին:

Սեռով պայմանավորված տարբերություններ

Երիտասարդներ	Ավագ սերնդի ներկայացուցիչներ
Գավառում նախ պետք է վերացնել գենդերային անհավասարությունը: Կարծրատիպը կոտրելու համար ես վեց տարի գնացել եմ վոլեյբոլի, ու իմ մարզիչն ինձ չէր կարողանում բացատրեր նենց, ոնց տղաներին: Աղջիկները կաշկանդվում են նման տեղեր գնալուց, որովհետև բացի մենթալիտետի հետ կապված խնդիրը, երիտասարդ տղաներն էլ իրենց դրսևորելու ճիշտ ձև չգիտեն: Մեր մոտ կա այգի, աղջիկները չեն գնում, որովհետև չկան սահմանափակումներ: Գավառում աղջիկներն ավելի շատ են ներգրավված գործընթացներում, քան տղաները: Նման երիտասարդական ծրագրերին մեր համայնքի տղաների մասնակցությունը բավականին խնդրահարույց է: Երբ երիտասարդ տղան մասնակցում է երիտասարդական ակտիվիզմի տարրերով նախաձեռնություններին մյուս տղաների շրջապատում կարող է դառնալ ծաղրի առարկա:	Մինչև այս ամեն ինչի սկսելը կա գենդերային անհավասարության խնդիր: Օրինակ աղջիկներն ուզում են գնալ խմբակների, բայց անհարմարության պատճառով չեն շարունակում հաճախել: Առաջին մեծ խնդիրը մենթալիտետի փոփոխությունն է: Անհրաժեշտ է երիտասարդների շրջանում սեր սերմանել սպորտի նկատմամբ: Բայց աղջիկները, ովքեր սեր ունեն դեպի սպորտը, չեն զբաղվում դրանով հենց կարծրատիպերի պատճառով: Համայնքում տղաներն ավելի շատ ունեն աշխատանքի կարիք, բայց կարիերայի կենտրոնը կարող է նպաստել աղջիկների, կանաց աշխատելու վերաբերյալ առկա կարծրատիպերի վերացմանը: Մեծ գործ արած կլինեինք սրանով: Գավառում կա մարզադպրոց, սակայն այն աղջիկներին չի կարող ծառայել:

Թիրախային խմբերի հետ **հասցեական աշխատանքի կարևորությունը** քննարկումների ընթացքում շեշտվում էր թե՛ երիտասարդների, թե՛ մեծահասակների մոտ: Պատերազմի մասնակից վիրավորներ, հաշմանդամներ, տաղանդավոր երեխաներ, տարեցներ, Արցախից տեղահանվածներ, աշխատանքային հարաբերություններից դուրս մնացած կանայք. այս և այլ թիրախային խմբեր առանձնացվում էին գրեթե բոլոր ծրագրերի դիտարկման ժամանակ: Այս հարցում երկխոսությունը, թերևս, ամենաստացվածն էր. բոլորն էին վստահ նման աշխատանքի կարևորության հարցում, և սեղանին դրված ծրագրերը, բուն ծրագրային վերլուծությունից զատ, դիտարկում էին նաև այս տեսանկյունից:

Թիրախային խմբերի մասին

Երիտասարդներ	Ավագ սերնդի ներկայացուցիչներ
Համալիրի գոյությունը կօգնի նաև 2020 թվականի պատերազմի մասնակիցներին առաջնահերթության կարգով օգտվել վերականգնողական բուժումից: Մենք ունենք պատերազմի մասնակից վիրավորներ, ովքեր չունեն ռեսուրս ամեն անգամ Երևան հասնելու. նման համալիրի ստեղծումը բնականաբար անհրաժեշտ է: Մենք անընդհատ խոսում ենք միայն լողավազանի մասին, բայց պակաս կարևոր չէ	Մարզաառողջարանային համալիրի գոյությունը կտա թիրախային խմբերին առանձնացնելու և ավելի հասցեական աշխատելու նոր հնարավորություններ: Մենք պետք այդպիսի կենտրոն ունենանք, որ տաղանդների բացահայտում կարողանանք անել այնտեղ: Ո՞վ ասաց, որ Գավառի մարզաառողջարանային համալիրից ապագա օլիմպիական չեմպիոններ չեն դուրս գա:

այն, որ մարզաառողջարանային համալիրը կկարողանա պատերազմից տուժած երիտասարդների համար առողջարարական ծառայություններ մատուցել, որպեսզի նրանք ամեն անգամ չգնան հասնեն մայրաքաղաք:

Կանանց աշխատանքային խնդիրների շուրջ հատուկ շեշտադրումներն այս ծրագրում շատ ճիշտ են արված:

Իմ 4 տարեկան թոռնիկին ինքս տանում են Հրազդան լողի, բայց նա հմտացած է ֆուտբոլում: Կասե՞ք այստեղ ում մոտ տանեմ երեխային, որ նրան դարձնի Ռոնալդո կամ հայտնի մի ֆուտբոլիստ:

Երիտասարդական կենտրոնում կարող են ներգրավվել նաև մինչև 35 տարեկան Արցախից տեղափոխված մեր հայրենակիցները:

«*Օնլայն հարթակում նման տեղեկատվությունն ավելի մեծ տարածում կունենա, քան տպագրված տարբերակով, քանի որ գիրք հիմա երիտասարդները չեն կարդում*»,- նման դիրքորոշումներն ամենևին եզակի չէր քննարկումների ընթացքում: Թե՛ մեծահասակները, թե՛ երիտասարդները կարևորում են երիտասարդներին նորարարական մոտեցումներով ու գործիքներով մոտիվացնելը, քանի որ ավանդական, օրինակ, գիտելիք ստանալու և տեղեկանալու համար «*գիրք կարդալն այլևս գրավիչ չի*» նրանց համար: Միևնույն ժամանակ, երկուսն էլ ընդունում են, որ երիտասարդներն այստեղ անհրաժեշտ հմտություններ ունեն, հատկապես թվային գործիքներով աշխատելու և կարևորում են այդ հմտությունների կիրառումը՝ հօգուտ բոլորի:

Ժամանակակից գործիքներ և մոտիվացիա

Երիտասարդներ

Ծրագրավորողները կամ, օրինակ, Թումոյում կարող են զբաղվել QR կոդերի պատրաստմամբ:

Դասընթացները կարելի է նաև օնլայն կազմակերպել, իսկ երիտասարդներին կարելի է օգնել նաև օնլայն աշխատանք գտնել:

Կարելի է նորարարական միջոցներ օգտագործել: Եվրոպայում շատ տարածված է՝ պատմամշակութային օբյեկտների վրա պահում ես հեռախոսը և ստանում ինֆորմացիա:

Սոցիալական հարթակներում ավելի շատ պետք է տարածվի տեղեկատվությունը: Եթե կարիք լինի նաև կամավորներով կարող ենք շրջել մարզերով և տեղեկատվություն տարածել:

Ավագ սերնդի ներկայացուցիչներ

Երիտասարդները, օրինակ Թումոյում սովորողները, կարող են զբաղվել այցեգրքի դիզայնով:

Այցեգիրք կոչվածը ինքը դժվարություն չէ, պարզապես պետք է մի խումբ երեխաներ «Սարվոր տուրիզմի» և այլ կառույցների օգնությամբ իրենց մասնակցությունը ունենան, օրինակ, կանգառներում QR կոդեր տարածելու գործում:

Երիտասարդները կարող են իրենց սեփական սոցիալական էջերով նպաստել այցեգրքի տարածմանն ու գովազդին:

Համացանցը կարևոր է իրազեկման համար: Փառատոնի մասին նախապես ակտիվորեն պետք է տեղեկացվի բնակչությանը:

5. Մասնակիցների հիմնական դիտարկումներն ու եզրահանգումները

Սցենար 1. Էթնոզբոսաշրջության զարգացումը Գավառում. ամենամյա «Հովվի փառատոն»

- Փառատոնն իսկապես կարևոր է, դա ևս մեկ խթան է, որ մարդիկ չկտրվեն գյուղից. Ամեն ինչ պետք է անել, որ մարդիկ տեղում մնան, գյուղերը զարգացնեն:
- Այս փառատոնն իսկապես մեր ավանդույթները պահպանելուն նպաստելու հարցում մեծ ներուժ ունի:
- Լավ կլիներ փառատոնի ընթացքում, ի հավելում նախատեսվածի, ներկայացնել նաև թաղիքագործությունը, բրդի հետ կապված այլ արհեստներ:
- Կարևոր եմ համարում նման միջոցառումների անցկացումը, որովհետև մեր ավանդույթների պահպանումն իսկապես առաջնային խնդիր է:
- Փառատոնն ամենամյա դարձնելու դրական կողմերից է ավանդույթների պահպանումը, մոռացված կերակրատեսակների հետբերումը, ինչպես նաև զբոսաշրջության զարգացումը:
- Մենք կարևորում ենք սարվորների դերը համայնքում:
- «Հովվի փառատոնը» շատ ավելի էական դեր կունենա, եթե արվի ոչ միայն տեղական ուժերով. սա պետք է արվի պետականորեն, ներառվի օրացույցի մեջ, ստանա համապետական հնչեղություն:
- Այս գաղափարը նոր չի, այն կա խորհրդային ժամանակներից սկսած: Այն ժամանակ ամեն տարի մեկ օր նշվում էր հովվի օրը:
- Նախկին փորձը վեր հանեց խնդիրներ, որոնց պետք է ուշադրություն դարձնել ապագայում: Մարդիկ չեն կարողանում միջոցառման վայրը գտնել: Տեղեկացվածության խնդիր կա. Սբ. Խաչի մատուռի տեղն անցյալ տարի չկարողացանք գտնել:
- Իմ կարծիքով՝ այս ծրագիրն առաջնահերթություն չէ մեր քաղաքի համար:
- Կցանկանայինք, որ այդ փառատոնն ավելի հաճախ տեղի ունենա: Շատ հաճելի էր: Գյուղացիները ներկայացրեցին իրենց արտադրանքը, տոնական տրամադրություն կար այդ ամենում:
- Փառատոնն անշուշտ զբոսաշրջիկների ներհոսք կարող է ապահովել, ինչը համայնքին եկամուտների ավելացում կբերի: Սակայն, ցավոք, այս հետաքրքիր միջոցառման մասին տեղեկատվությունը շատ չի տարածվում, որպեսզի այլ վայրերից էլ շատ մարդիկ գան:
- Անհրաժեշտ են ենթակառուցվածքներ և առկա է կոմունիկացիաների խնդիր, օրինակ, զբոսաշրջիկների հետ հաղորդակցվելու և նրանց սար բարձրանալը հնարավոր դարձնելու համար:
- Նախկին արդյունաբերական քաղաքը չէ այլևս Գավառը, այդ իսկ պատճառով այս փառատոնն ամենամյա դարձնելու անհրաժեշտությունը բավականին մեծ է:
- Կորցնում ենք ճաշատեսակներ, որովհետև միջազգային ճանաչում չեն ունենում: Ցանկացած քայլ, որ նպաստում է այս խնդրի լուծմանը, ողջունելի է:
- Տրանսպորտի խնդիր կա, և ոչ բոլորն են կարողանում գալ: Լավ կլիներ փառատոնի անցկացման վայրն ավելի հասանելի լիներ ոտքով գնալու համար: Լավ կլինի նաև, որ փառատոնի օրը ֆիքսված լինի տարեկան օրացույցում:
- Փառատոնի մասնակից սարվոր ընտանիքների շրջանակը չի կարող ընդլայնվել. արդեն իսկ խնդիր կա 60 ընտանիքների ներգրավման հետ կապված՝ գալիք տարիներին հնարավոր է ավելի քիչ մասնակիցներ լինեն: Նույն ընտանիքների ավելի երիտասարդ անդամները, հնարավոր է, չցանկանան մասնակցել:
- Զբոսաշրջիկների հոսք համայնք ապահովելու համար, ինչ խոսք, կարևոր է այս ծրագիրը: Լավ ներկայացնելու դեպքում նրանք միշտ էլ կցանկանան այստեղի մշակույթին ծանոթանալ:
- Մեր ցանկացած ավանդույթ ունի գիտական հիմք. ճանաչողական հետազոտություն պետք է արվի, հրապարակումներ պետք է լինեն:

- Սա համայնքային միջոցառման օրինակ է, որն ունի համապետական և արտերկրյա զբոսաշրջության ներգրավման ներուժ:
- Մեր ավանդույթների պատմությունը պահպանվում է նաև նման միջոցառումների միջոցով:
- Այժմ սարվորի կյանքը նույնպես փոխվել է. հին մշակույթը վերանում է:
- Համացանցը կարևոր է իրազեկման համար: Փառատոնի մասին նախապես ակտիվորեն պետք է տեղեկացվի բնակչությանը:
- Նախորդ փորձից ելնելով՝ շտկումների տեսանկյունից կարող եմ ասել, որ խորհրդանշական հուշանվերները բացակայում էին, դա կարելի է ավելացնել:
- Ճապոնական մի կղզում մարդիկ են ապրում, որտեղ բոլորը գիտեն իրենց ռազմական պարերը: Առաջարկվում է, որ մենք էլ բոլորս իմանանք մեր ազգային պարերը:
- Շատ լավ է, որ էս թեմային անդրադառնում եք: Առաջարկ ունեմ. մի քանի օր կարելի է ապրել սարվորների կյանքով:
- Բռենդավորման, հանրայնացման մեծ խնդիր կա այստեղ:
- Ավանդույթները չեն պահպանվում, որովհետև սակավ են փառատոնները մեր համայնքում:
- Կա խնդիր հանրային իրազեկման հետ կապված. բլոգերները խոշոր գումար են պահանջում փառատոնին մասնակցելու, իրենց լսարանի հետ կիսվելու համար:
- Հովվի փառատոնի կայացման համար գովազդը պետք է շատանա:
- Յուրաքանչյուր միջոցառում պետք է ունենա ղեկավար. ազգային կերակու՞ր ենք ներկայացնում, պետք է լինի ղեկավար՝ գիտակ մարդ:
- Նախորդ անգամ լուսաբանելու հրավիրված բլոգերները մի փոքր հիասթափված էին պրոֆեսիոնալիզմի բացակայության պատճառով:
- Կարծում եմ՝ թեմատիկան շատ նեղ է վերցված, որպեսզի լայն տարածում ունենա: Եթե կոնկրետ քաղաքային տոն լինի, գուցե ավելի հետաքրքրի մարդկանց:
- Պետք է լինեն տաղավարներ, որ ստեղծագործ մարդիկ նստեն ու, ասենք, վրձնեն տեղում:
- Եթե լինի ամենամյա, բոլորը նախապես իմանալու են, որ այդ կոնկրետ օրն է լինելու փառատոնը և նախապես կպլանավորեն իրենց գործերը:
- Գյուղական կյանքը բարելավելու համար պետք է գնահատել սարվորներին, գյուղական համայնքը, աշխատանքը:
- Եթե ունենանք սեփական տեխնիկա և տաղավարներ, ամեն տարի կարող ենք կազմակերպել, քանի որ փառատոնի բյուջեի մեծ մասը ծախսվում է հենց դրանց վրա:
- Ենթակառուցվածքներ՝ օրինակ հյուրատներ, չկան փառատոնը շարունակական դարձնելու համար: Եթե գիշերակացի տեղ չկա, մարդիկ պետք է մտածեն հետդարձի ճանապարհին ժամանակ հատկացնելու մասին:
- Որևէ հստակ օր ֆիքսելու կարիք չկա, քանի որ օտարերկրացիների հոսքը կարող է չհամապատասխանել ֆիքսված օրերին:
- Գավառի երիտասարդները պետք է կարդան, կրթվեն, ամենուր կրթական մակարդակի բարձրացում պետք է տեղի ունենա:
- Փառատոնն ակտիվություն կբերի մեր քաղաքին: Ցավոք, կացարաններ չունենալու խնդիրը շարունակում է վճռորոշ մնալ:
- Համայնքապետարանը ռեսուրսներ պետք է ներդնի զբոսաշրջությունը զարգացնելու ուղղությամբ: Գավառն ամենավերջին տուրիստական կենտրոնն է, ծառայությունների մատուցման հարցում կա ռեսուրսների խնդիր: Տուրիզմը պետք է զարգանա առաջին հերթին համայնքապետարանի աջակցությամբ:
- Պետք է լուծվի նաև սարերում՝ սարվորների կողքին գիշերելու հնարավորության հարցը:

- Եթե փառատոնը կազմակերպվի 5 կամ 3 տարին մեկ պարբերականությամբ, ավելի սպասելի կլինի և՛ սարվորների, և՛ մասնակիցների համար:
- Ցանկալի է, որ փառատոնը տարեցտարի նոր մտահղացումներով ավելի զարգացնեն:
- Սոցիալական հարթակներում ավելի շատ պետք է տարածվի տեղեկատվությունը: Եթե կարիք լինի նաև կամավորներով կարող ենք շրջել մարզերով և տեղեկատվություն տարածել:
- Ամեն դեպքում պետք է ամեն ինչ անենք, որ գրավենք զբոսաշրջիկներին և նրանք ցանկանան գալ ու մնալ այստեղ:
- Գործիքների սակավության պատճառով գյուղացու աշխատանքն արդյունավետ չէ: Ստացած եկամուտն ավելի քիչ է, քան թափած ջանքը, և գյուղացու աշխատանքը չի գնահատվում:
- Ես կարծում եմ՝ այս գաղափարի իրականացման համար պետք է գտնել լրացուցիչ ֆինանսական միջոցներ, քանի որ համայնքի բյուջեն կարող է ավելի արդյունավետ տնօրինվել:
- Կարծում եմ, եթե եռօրյա լինի, ինչպես անցած տարի էր, շատ ավելի լավ կլինի և հովիվներին ավելի շատ ժամանակ կտրամադրվի:
- Փառատոնը սարվորներին հնարավորություն է տալիս իրենց մշակույթը ներկայացնելու, իսկ համայնքին՝ իր տեսարժան վայրերի մասին իրազեկելու:
- Նման միջոցառումների առավոտից երեկո մասնակցելու պարագայում առաջանում է նաև բնական կարիքները հոգալու խնդիր: Սա խնդիր է, որ ժամանակակից լուծումներ է պահանջում:
- Մարդիկ տեղյակ չեն կյանքի շատ կարևոր բաղադրիչներից, օրինակ երիտասարդները տեղյակ չեն, թե ինչպես են պատրաստում պանիր, կարագ և այլն: Անշուշտ, հարց է նաև, թե արդյո՞ք երիտասարդներին դա հետաքրքիր է ընդհանրապես:
- 2023 թվականին ես մասնակցել եմ փառատոնին. կար հստակ ծրագիր, ունեինք մասնակիցները Եվրոպայից, այլ երկրներից, շատ հետաքրքիր էր բացահայտել Կիկլոպյան ամրոցը: Ունեինք ծրագիր, որը բացահայտում էր քարանձավները. բացահայտել ենք 10 քարանձավ: Փառատոնի ժամանակ հնարավորություն կար մասնակցելու կիթի, ծանոթանալու բուն հովվի կյանքին. դա հետաքրքիր էր:
- Մեզ պետք չի քաղաքակրթություն առանց արմատների: Պետք է երիտասարդներն ավելի շատ ներգրավվեն ավանդույթների պահպանման գործում:
- Նախորդ փառատոնից իմ տպավորությունն այն էր, որ զբոսաշրջիկների համար ամեն ինչ շատ լավ էր և ուսուցողական, իսկ տեղացիների համար այդքան էլ հետաքրքիր չէր, որովհետև հիմնականում ծանոթ էինք:
- Որպես երիտասարդ ինձ հուզում է, որ մարդիկ շատ կոմպլեքսավորված են այստեղ, այդ թվում նաև տարբեր միջոցառումների մասնակցելու հարցում. ունենք ներկայացնելու, բացատրելու խնդիր:
- Հոգնել ենք գնալ դեպի քաղաքականություն:
- Փառատոնը նպաստում է սարվորների և նրանց գործունեության շարունակականության:
- Երիտասարդները ոչ միայն կտեղեկանան, նաև կսկսեն գնահատել, արժևորել ամենօրյա մթերքները՝ պանիրը, կարագը, երբ տեսնեն, թե ինչքան չարչարանքով են դրանք պատրաստվում:
- Լայնացնե՛լ փառատոնի ընդգրկման շրջանակները: Տեղական արտադրողներին հստակ բացատրե՛լ փառատոնին մասնակցելու իրենց շահը:
- Առանց հովիվների քննարկում ենք նրանց գործառությունները:
- Սարվորի աշխատանքը շատ ավելի դժվար է, քան համակարգչով աշխատողի: Եկեք սա չմոռանանք:
- Կարելի է պատրաստել նաև փոքր տեսահոլովակներ, թե ինչպես են պատրաստում պանիր, կարագ ու տարածել: Արդյունքում, դիտողների մի մասին միգուցե հետաքրքիր այդ գործընթացը, և նրանք դառնան փառատոնի պոտենցիալ հյուրեր:
- Վարպետաց դասեր կարելի է կազմակերպել, որպեսզի ոչ միայն դիտեն, այլ նաև իրենք ներգրավվեն սարվորների կյանքին:

- Պետք է նախապես վիճակագրական տվյալներ ունենալ, թե Հայաստան այցելող զբոսաշրջիկների քանի տոկոսն է այցելում Գավառ, նոր կազմակերպել:
- Վստահ եմ՝ երիտասարդները կկարողանան պահպանել և արժևորել մեր ավանդույթները:
- Պանրի պատրաստումը պետք առանձին լինի, բրդի ստացումը, կաթի ստացումը և այլն: Պետք է առանձին միջոցառումներ լինեն, հետաքրքիր մրցույթներ կազմակերպվեն:
- Հովվին այսպես կտրում ենք նրա կենսադաշտից. պետք է նրա դրության և առօրյային մեջ ամեն ինչ ներկայացվի:
- Որքան լավ կլիներ, եթե պարբերական տուրեր լինեին սարվորների մոտ, և սարվորները վարձատրվեին այդ ամենը ներկայացնելու ծառայությունների համար:
- Մեր բոլոր երիտասարդներն էլ կմնան հայրենիքում, եթե համապատասխան պայմաններ լինեն ինքնադրսևորվելու, նաև ժամանցի համար:
- Գորգագործության ճյուղի զարգացումը կարող է խթանվել, եթե փառատոնում ներառվի դրա մանրամասն ներկայացումը:
- Գավառին բնորոշ փառատոն է, շատ լավ տարբերակ է ճանաչելիությունը բարձրացնելու համար:
- Զբոսաշրջիկների հոսքը մեծացնելու համար լուրջ ներդրումների կարիք կա:
- Քաղաքացին ապրում է գյուղացու աշխատանքի շնորհիվ, և ի՞նչ է բխում դրանից, այն, որ մարդիկ, մասնավորապես երիտասարդները կարողանան արժևորել գյուղացու՝ սարվորի աշխատանքը:
- Փառատոնը կարող է նպաստել անասնապահության զարգացմանը, և բնական ու մաքուր մթերքների ստացման մասին տեղեկացվածության բարձրացմանը:
- Կարելի է տեսական գիտելիքները հարստացնել գործնական աշխատանքով կամ գործնական խաղերով: Օրինակ ինչ-որ կերպ երիտասարդներն իրենք կատարեն սարվորների որոշ աշխատանքներ:
- Բուհում առաջադրանք ունեինք, թե ովքեր են հանրապետության ամենակարևոր մարդիկ. դասախոսս պնդեց, որ դրանք հովիվներն ու կթվորուհիներն են:
- Կարելի է մտածել նաև «Հովվի փառատոնը» «Սարվորի տոնի» վերածելու գաղափարի մասին:

Սցենար 2. Կարիերայի կենտրոնի ստեղծում

- Աշխատանք փնտրողը միշտ էլ այն գտնում է: Մարդիկ կան՝ չեն աշխատում, պարզապես նստում են տանը և ցանկանում նպաստ ստանալ:
- Կարիերայի կենտրոնը կօգնի տեղում՝ հենց Գավառում մասնագիտական կողմնորոշում ստանալ:
- Մասնագիտական կողմնորոշման կենտրոնը կարող է օգնել կողմնորոշման հարցում, բայց ոչ աշխատանքի տեղավորման:
- Կարծում եմ՝ համայնքի երիտասարդների համար կարևոր ծրագիր է:
- Շատ պետք է, անգամ պարտադիր է: Երիտասարդները պրոֆեսիոնալ իրազեկման մեծ կարիք ունեն:
- Իմ կարծիքով աշխատատեղերի մասով շատ վատ վիճակում չենք:
- Մեր երիտասարդները հնարավորություն կունենան հաճախել այդ կենտրոն և նոր բաներ սովորել:
- Կարիերայի կենտրոնի ստեղծումը կարևոր է, բայց աշխատատեղերի ստեղծումն ավելի կարևոր է:
- Լավ կլինի մեր երիտասարդները 11-րդ դասարանից սկսած պրակտիկայի գնան, որպեսզի հմտություններ ձեռք բերեն:
- Եթե Գավառում մարդիկ մասնագիտություն ասելով միայն չհասկանան իրավաբան, հաշվապահ և այլն, մեր վիճակը ավելի լավ կլինի: Կան շատ կարևոր մասնագիտություններ, որոնք վերացման եզրին են: Կան արհեստներ, որոնց ևս ցանկալի է տիրապետել:

- Մասնագիտության ընտրությունը շատ հաճախ կատարվում է ինքնաբերաբար, կարիերայի կենտրոնը կնպաստի, որպեսզի երիտասարդները գիտակցված ընտրություն կատարեն:
- Սկզբից թող ստեղծվեն աշխատատեղերը, հետո զուգահեռ գործի կենտրոնը, որպեսզի ուղղորդի այնտեղ:
- Կարիերայի կենտրոնը մեր երկրում առաջին հերթին պետք է աշակերտներին, հետո նոր երիտասարդներին: Մասնագիտության ընտրության հարցում աջակցությունը պետք է վաղ տարիքից սկսել:
- Ես երիտասարդ եմ և չունեմ նախընտրած մասնագիտություն: Կարծում եմ՝ կարիերայի կենտրոնը կարող է ուղղորդել ինձ:
- Կբացվեն նոր աշխատատեղեր, երիտասարդներն ավելի հեշտ կկողմնորոշվեն. խոշորացված համայնքի համար այն շատ կարևոր է:
- Եթե չլինի մրցունակ եկամուտ, երիտասարդները չեն շահագրգռվի իրենց մասնագիտությամբ աշխատելու:
- Կարիերայի կենտրոնում չներառվեն մասնագիտություններ, որոնք պահանջարկ չունեն Գավառում: Ամենադժվարը, թերևս, գործատուի և հնարավոր աշխատողների միջև կապի ստեղծումը կլինի:
- Գրագիտության, իմացության խնդիրներ կան: Աշակերտին ասում են «սերվիզի բաժին», նա հասկանում է թե «ճաշի սերվիզ»:
- Կարիերայի կենտրոնը կառույց է, որը հնարավորություն է տալիս հասկանալ, թե տարածաշրջանը ինչ մասնագետներ և աշխատատեղեր ունի: Մեր մարզում աշխատատեղեր քիչ կան, կարիերայի կենտրոնը կբացահայտի համայնքի բնակիչների համար թափուր աշխատատեղերը:
- Գավառը գյուղատնտեսական տարածաշրջան է, տարածաշրջանի աշխատուժը հիմնականում կենտրոնացված է գյուղատնտեսական ոլորտում: Շեշտը պետք է դրվի գյուղատնտեսական ոլորտի ենթակառուցվածքների ստեղծման և աշխատատեղերի ավելացման վրա:
- Մարդու ուժեղ կողմերը բացահայտող կենտրոններ են պետք:
- Կան աշխատատեղեր, որոնք թափուր են մնում զուտ որովհետև համապատասխան մասնագիտությունն ունեցող մարդիկ տեղյակ չեն դրանց գոյության մասին: Տեղեկատվությունը չի հասնում հասցեատիրոջը:
- Կարիերայի կենտրոնները պետք է աշխատեն մանկապարտեզներում, դպրոցներում՝ վաղ հասակից երիտասարդներին տալով մասնագիտական կողմնորոշման գիտելիքներ:
- Չկան մասնավոր կենտրոններ և չկան աշխատատեղեր. պետք է ավելացվեն նախ աշխատատեղերը:
- Կենտրոնը պետք է ոգևորի հաջողության պատմություններով, պետք է ունենա հնարավորություն հրավիրելու կայացած մասնագետների, որոնք իրենց փորձի հիման վրա ցույց տան և ոգևորեն, թե ինչի կարելի է հասնել այս կամ այն ոլորտում:
- Դպրոցականներին հրավիրել են համալսարան և ծանոթացրել են մասնագիտություններին, հնարավոր է այս գործընթացը դարձնել շարունակական և բարելավել:
- Համապատասխան աշխատատեղերի բացակայության պատճառով բնակիչները գնում են խոպան, սա շատ տարածված երևույթ է մեզանում: Կարիերայի կենտրոնը միգուցե կնպաստի, որ ավելի շատ մարդ հրաժարվի համայնքն ու Հայաստանը լքելու որոշումից:
- Գավառում աշխատաշուկա մուտք գործելու գլխավոր խնդիրը կոռուպցիոն ռիսկերն են՝ մասնավորապես խնամի-ծանոթ-բարեկամ մեխանիզմները:
- Եթե աշխատատեղ չկա, կենտրոնը բացելու իմաստ էլ չկա:
- Երկրում կրթական համակարգը չի համապատասխանում լայն չափորոշիչներին, ահա թե որտեղից են սկիզբ առնում աշխատաշուկայի խնդիրները:
- Իհարկե շատ լավ կլիներ, որ երիտասարդները սովորելուց, մասնագիտություն ստանալուց հետո կարողանային հենց իրենց համայնքում համապատասխան աշխատանք գտնել:

- Կա լիազոր մարմին, որի մասին տեղյակ չեն երիտասարդները: Երիտասարդները տեղյակ չեն Գավառում տեղի ունենալիք իրադարձությունների մասին:
- Պետք է բացվեն դասընթացային կենտրոններ, որոնք մասնագիտություններ կսովորեցնեն: Այդ կերպ նաև աշխատատեղեր կստեղծվեն:
- Կարիերայի կենտրոնը կարևոր է, քանի որ դեմ առ դեմ քննարկումը, մասնագիտական խորհրդատվությունն ավելի վստահելի է, քան ինչ-որ տեղից տեղեկատվություն գտնելը, կարդալը:
- Ես կարևորում եմ այս գործի կազմակերպիչների ճիշտ ընտրությունը, որպեսզի երիտասարդները սիրով կարողանան գնալ:
- Եթե այս ծրագիրը դիտարկենք համեմատության մեջ, ապա չեմ կարծում, թե ըստ առաջնահերթության սա թիվ մեկն է:
- Կանանց աշխատանքային խնդիրների շուրջ հատուկ շեշտադրումներն այս ծրագրում շատ ճիշտ են արված:
- Մարդ կա սովորում է Օքսֆորդում, դասի չի գնում, որովհետև գործում է օնլայն համակարգ: Մարդիկ գնում են անոմալ զարգացման ճանապարհով:
- Պետք է ունենալ ֆիզիկական տարածք, գրասենյակ, որպեսզի երիտասարդն այցելի, ծանոթանա, հարցեր տա, տեղեկանա ամեն ինչի մասին:
- Վերապատրաստումները շատ կօգնեն գտնել աշխատանք: Պետք է իրականացվեն աշխատատեղերի մասին համապատասխան դասընթացներ:
- Բուհերում, ուսումնական հաստատություններում մասնագիտությունները պետք է այնպես լինեն, որ աշխատաշուկայի հետ կապը հեշտ լինի:
- Կարիերայի կենտրոնը կարող է նպաստել գործատու-բուհ, բուհ-ավագ դպրոց-գործատուներ համագործակցությանը:
- Այնքան էլ առաջնային չէ կարիերայի կենտրոն ստեղծելը, քանի որ արդեն իսկ կա համապատասխան մարմին:
- Պետությունը պետք է որոշի մասնագիտական առաջնահերթությունները և կարիերայի կենտրոնների միջոցով իրազեկի համայնքներին:
- Օրինակ՝ Չինաստանի մանկապարտեզներում երեխաները փոքր տարիքից ամեն բան անում են ինքնուրույն:
- Ակտիվ աշխատանքի կարիք եմ տեսնում դպրոցներում: Ավագ դպրոցի աշակերտներին պետք է իրազեկել մասնագիտական կողմնորոշման հարցերի շուրջ և աշխատաշուկայի մասին դասընթացներ անցկացնել:
- Իսկ կարող ե՞ք ասել, գյուղու՞մ ինչպես զարգացնեն երիտասարդներն իրենց ունակությունները կամ քաղաքում ուսումնառությունից հետո գյուղ վերադառնալիս ինչպե՞ս աշխատանք գտնեն հենց իրենց իսկ համայնքում:
- Կենտրոնն օժանդակում է մասնագիտության ընտրության հարցում, օգնում է պատրաստել ու հավաքում է ինքնակենսագրությունները, և աշխատանքի թափուր տեղեր լինելու դեպքում զանգահարում ու կանչում են. ես այսպես եմ պատկերացնում կարիերայի կենտրոնի աշխատանքը:
- Կարիերայի կենտրոնը տեղում վերապատրաստվելու հնարավորություններ կարող է ստեղծել. այսօր ժամանակակից վերապատրաստման կուրսերը բավականին թանկ են և ոչ բոլորին են հասանելի:
- Իհարկե մենք էլ շատ կցանկանայինք, որ կազմակերպվեն դասընթացներ և վերապատրաստումներ, բայց, կարծում եմ, համայնքի բյուջեն չի բավարարի նման մեծ նախաձեռնության համար:
- Համայնքում տղաներն ավելի շատ ունեն աշխատանքի կարիք, բայց կարիերայի կենտրոնը կարող է նպաստել աղջիկների, կանաց աշխատելու վերաբերյալ առկա կարծրատիպերի վերացմանը: Մեծ գործ արած կլինեինք սրանով:

- Իսկ ինչու՞ չենք ավելի լայն նայում հարցին. կենտրոնը կարող է նաև առաջարկել բիզնես գաղափարներ նրանց, ովքեր ուզում են գործ սկսել:
- Մի հասարակությունում, որը չունի տնտեսական ռազմավարություն, կարիերայի կենտրոնի մասին խոսելը զուր է:
- Դասընթացները կարելի է նաև օնլայն կազմակերպել, իսկ երիտասարդներին կարելի է օգնել նաև օնլայն աշխատանք գտնել:
- Անհրաժեշտ է աշխատաշուկայի կարիքների գնահատում, նոր դրա հիման վրա վերապատրաստումների իրականացում՝ գործատուի և շահառուի համագործակցությամբ:
- Կարիերայի կենտրոնը կարող է իրականացնել պոտենցիալ աշխատակիցների նախնական մասնագիտական վերապատրաստում՝ պատվիրակված գործատուների կողմից:
- Մենք չգիտենք, որ ուղղությամբ ենք շարժվում. բիզնեսի, տնտեսության ո՞ր ուղղությամբ ենք մասնագիտանում:
- 100-200 հազար աշխատավարձը չի բավականացնի երիտասարդի պահանջներին, և նա համայնքից կգնա ավելի բարձր աշխատավարձի հետևից:
- Ես համաձայն չեմ, որ նման կենտրոնը դպրոցին կից կառույց լինի: Ավելի տարիքով տղամարդիկ և հատկապես կանայք կարող է ամաչեն այցելել այնտեղ: Իսկ ընդհանրապես իմ կարծիքն այն է, որ եթե մարդ ցանկանում է աշխատանք գտնել, հաստատ կփնտրի ու կգտնի, նման կենտրոնները չեն, որ այդ հարցը պետք է լուծեն:
- Եթե ես հաստոց ունենամ, կգտնվի մարդ, ով այն կկառավարի:
- Կարիերայի կենտրոնը պետք է կենտրոնանա կա՛մ մասնագետի պատրաստման, կա՛մ վերապատրաստման վրա:
- Մեր համայնքում առկա է հոգեբանության փոփոխության խնդիր կարծրատիպերի առումով: Արմատացած կարծրատիպերը խանգարում են կին մասնագետներին աշխատել:
- Ես մասնագիտական կողմնորոշման սեմինարների մասնակցել եմ, բայց դրանք ինձ չտվեցին իրատեսական պատկեր, թե ես ինչով պետք է զբաղվեմ:
- Մասնագետները աճելու և զարգանալու ձգտում ունեն: Ինքս հաշվապահ եմ, գնացել էի Երևան վերապատրաստման: Այնտեղի կենտրոնը տեխնիկապես և հնարավորություններով շատ հագեցած էր: Ինձ զարմացրեց փաստը, որ հաշվապահական կուրսի մասնակիցների մեջ միակ մասնագետը ես եմ՝ կային նկարիչներ, երաժիշտներ և այլ ոչ մասնագետներ, որոնք այդ կենտրոնում նոր որակավորում էին ստանում: Ահա այդպիսին պետք է լինի կարիերայի կենտրոնը:
- Կարիերայի կենտրոնը թող սկզբում էնպիսի մասնագիտությունների վրա կենտրոնանա, որոնք համայնքում պետք են և ակտուալ են:
- Պահանջում են, պահանջում են և կրկին պահանջում են, բոլորը ցանկանում են վերաորակավորվել: Սակայն վերապատրաստման որակյալ կենտրոններ չկան, չեն ստեղծում:
- Կարիերայի կենտրոնը վերապատրաստման համար չէ:
- Գավառում պետք է էքսպոներ լինեն աշխատաշուկայի մասին տեղեկացնելու համար:
- Եթե միջոցներ հատկացնենք ու ստեղծենք այս կենտրոնը, իսկապես գերազանց կլինի:
- Կենտրոնը կարող է առաջարկների փաթեթ ուղարկել բուհին, թե որ մասնագիտությամբ են հետաքրքրված երիտասարդները և բուհում համապատասխան բաժին բացվի:
- Այս պահին կարիերայի կենտրոնի բացման իմաստ չեմ տեսնում, որովհետև համապատասխան ռեսուրսներ չունենք:
- Բայց արդյո՞ք էդ սովորած մասնագիտությունները ունեն իրենց համապատասխանող աշխատատեղերը և պահանջարկը: Օրինակ ես ֆիզկուլտի մասնագետ եմ, բայց չկա էդ աշխատատեղը, որ ես զբաղվեմ իմ մասնագիտությամբ: Էս երևույթը ստիպում ա իմ նման բնակիչներին արտագաղթել: Ինձ թվում ա կարիերայի կենտրոնը չի օգնի, դրանով պետք ա զբաղվի պետությունը:

- Օրինակ՝ վարպետաց դասերը, որոնք մենք դիտում ենք հեռուստատեսությամբ, շատ օգտակար են: Կարիերայի կենտրոնի գործառույթը կարելի է ուղղակի անվանել սոցիալական փորձի փոխանցում:
- Այն կանայք, ովքեր չունեն բարձրագույն կրթություն, աշխատանքային փորձ և այլն, կարող են աշխատել այնպիսի տեղերում, ինչպիսիք են՝ կարի արտադրամասը, հրուշակեղենի գործարանը և այլն, թեկուզև ցածր աշխատավարձով:
- Կարիերայի կենտրոնը նաև աշխատավարձերի խնդրով կարող է զբաղվել:
- Ես շատ ավելի պարզ եմ տեսնում Կարիերայի կենտրոնի գործառույթը. այն յուրաքանչյուր մասնագիտության մասով հստակեցում պիտի անի, իսկ երիտասարդը ճիշտ ընտրություն կատարի մասնագիտությունների մեջ: Վերջ:
- Կենտրոնը կարող է նպաստել նաև միջմարզային, միջհամայնքային կապերի զարգացմանը:
- Այս տարածաշրջանի կանայք շատ աշխատասեր են, նախկինում այստեղ գործող 17 գործարաններում նրանք ակտիվորեն աշխատել են: 10 հազար բանվոր ենք ունեցել, եթե հիմա էլ աշխատանք լինի, ինչու՞ չեն աշխատի:
- Եթե կարիերայի կենտրոնն ուսումնասիրելու է բոլոր մասնագիտությունները և այդ ուսումնասիրությունը հրապարակայնացնի, ապա դա կարող է նպաստել երիտասարդների արտահոսքին, որովհետև ակնառու կդառնա, որ աշխատաշուկայում ոչ բոլորի անհրաժեշտությունը կա՝ տվյալ դեպքում մեր համայնքում:

Սցենար 3. Գավառի «Տուրիստական այցեգրքի» հրապարակում

- Այցեգրքի ստեղծումը հետաքրքրություն կստեղծի թե՛ զբոսաշրջիկների, թե՛ տեղաբնակների համար: Գավառ համայնքում շատ հետաքրքիր վայրեր կան, որոնց մասին մենք տեղյակ չենք:
- Համաձայն չեմ գրքի ստեղծման գաղափարի հետ, ավելի լավ է այդ ամենն անել տեսանյութի տեսքով: Չեն օգտագործվում գրքերն այլևս:
- Այցեգիրքը պետք է ավելի շատ լեզուներով թարգմանված լինի՝ օրինակ չինարեն, իսպաներեն ևս պետք է թարգմանել:
- Զբոսաշրջության զարգացման ուղղությամբ հատվածային ծրագրերը շատ օգտակար չեն լինի իմ կարծիքով, պետք ստեղծել տուրիստական կենտրոն, որն էլ կիրականացնի և կհամակարգի բոլոր գաղափարները:
- Տեղացիները եթե վստահ լինեն, որ մշտապես տուրիստներ հոսք կլինի, հյուրատները մեծացնելու կամ նորերը ստեղծելու մասին կսկսեն լրջորեն մտածել:
- Տուրիստական այցեգիրքը թույլ է տալիս բացահայտել տուրիստական կենտրոնները և վայրերը, օգնում են զբոսաշրջիկին հասկանալ, թե որտեղ գնալ:
- Այցեգրքի համար կարող են տվյալներ քաղել նաև տեղի բնակիչների ստեղծագործողություններից, նրանց հեղինակած գրքերից:
- Օնլայն հարթակում նման տեղեկատվությունն ավելի մեծ տարածում կունենա, քան տպագրված տարբերակով, քանի որ գիրք հիմա երիտասարդները չեն կարդում:
- Գավառի տուրիստական այցեգիրքը պետք է ստեղծվի մասնագիտական լուրջ ռեսուրսների ներգրավմամբ, մեզնից ոչ մեկը չի կարող դա անել: Պետք է եռալեզու լինի, և բոլոր զբոսաշրջային վայրերը մանրամասն ներկայացվեն:
- Այցեգրքի փոխարեն ավելի արդյունավետ կլինի կայք պատրաստել, մարդիկ ավելի շատ համացանցից են օգտվում: Նաև պետք է տեղում զբոսավարներ լինեն:
- Կայքը պետք բացել այն ժամանակ, երբ ունենանք տուրիստական կենտրոն, որովհետև այն մշտապես հետևելու, սպասարկելու, թարմացնելու կարիք է ունենալու:
- Տուրիստական այցեգիրքը լավ տարբերակ է, բայց մշտապես նոր վայրեր են բացահայտվում, զբոսաշրջային ուղիներում փոփոխություններ են լինում, շատ բան է փոխվում. հարկավոր է ավելի

դինամիկ տարբերակ, որը հեշտությամբ լրացվելու, փոփոխվելու ենթակա է: Այդպիսին, իհարկե, կայքն է:

- Անհրաժեշտ է մշակել Գավառ համայնքի մասին համակողմանի տեղեկատվություն և տեղադրել հնարավորինս շատ կայքերում:
- Կայք ունենալն, իհարկե, կարևոր է, սակայն անհրաժեշտ է մտածել դրա պարբերաբար թարմացնելու հնարավորության և ռեսուրսի մասին:
- Ֆինանսավորման պակաս կա, իսկ ներկայացնելու բան միշտ կգտնվի. օրինակ մեր նոր բացահայտված քարանձավներն արժի որ ներկայացվեն ոչ միայն հայաստանաբնակներին:
- Կա տարեցների ստվար զանգված, որոնց ավելի նպատակահարմար է գրքային տարբերակով ընթերցել, քանի որ ոչ բոլորն են կարողանում օգտվել համակարգչից ու ինտերնետից, և դա կարող է խթան հանդիսանալ, որպեսզի երիտասարդներն ավելի շատ կարդան:
- Ես ինքս ինքնուրույն google-maps-ում ավելացնում եմ գավառում գործող հաստատությունները:
- Կարող է ինտերնետի բացակայությունը խնդիր առաջացնի, իսկ գիրքը տվյալ պարագայում ավելի հարմար կլինի: Գիրքը մի քանի տարին մեկ կարելի է թարմացնել:
- Շատ կարևոր է գրքային տարբերակը, քանի որ գիրքն ավելի հավաստի է ընկալվում, քան օնլայն հարթակում:
- Մեր տարածաշրջանում կան շատ տեսարժան վայրեր, պետք է հասկանալ, թե դրանք ոնց մանրամասն ներկայացնենք բոլորին:
- Տեղեկատվական ցուցանակներ տեղադրել այն եկեղեցիների, մատուռների մոտ, որոնց հարևանությամբ դեռ չկան նման ցուցանակներ:
- Կարելի է ստեղծել gavar.am կայքը, սակայն սա էլ քննարկման ենթակա հարց է:
- Գիրքն ունի առավելություն, այն միշտ երևացող է և մնայուն արժեք:
- Պետք է ամենայն խորությամբ հետազոտել Գավառը և նոր այդ ուսումնասիրության արդյունքների հիման վրա ստեղծել այցեգիրքը:
- Նորատուսում կանայք չորաբ են գործում, որոնց վրա ազգային նախշեր չկան, կարելի է այդ կանանց սովորեցնել, որ չորաբները գործեն ազգային նախշերով:
- Գրքի ամեն մի էջը կարելի է նվիրել Գավառի ինչ-որ տարածաշրջանի, մանրամասն ներկայացվի, որպեսզի մարդիկ կարողանան որոշում կայացնել ուր գնալ:
- Ֆեստիվառի ժամանակ ես ինֆոկենտրոնում էի. կային եռալեզու թռուցիկներ, որտեղ ներկայացված էր, թե ինչ կարելի է անել, ինչ ուտել: Շատ պրակտիկ էր:
- Տեսարժան վայրը պետք է ունենա հետաքրքիր պատմություն, որ հետաքրքիր լինի մարդկանց, որ գնեն՝ կարդան, ծանոթանան:
- Մենք թանգարան ունենք, որտեղ ներկայացված են մեր պատմական արժեքները. միայն մեր գերեզմանների շրջանը վերցնենք՝ կարող ենք դարձնել տուրիստական տարածք:
- Որոշակի տեղեկատվություն կարելի է թողնել նաև Գավառի կանգառներում:
- Լավ կլինի Գավառի խոհանոցը ներկայացնող մշտական Վարպետաց դասեր լինեն, որ այցեգիրքը կարդացած զբոսաշրջիկը կարողանա տեղում մասնակցել:
- Ես վստահ եմ, որ լավ գովազդի շնորհիվ այստեղ տուրիզմը կարող է զարգանալ:
- Օրինակ երևանցին ցանկանում է տեղեկանալ Գավառի զբոսաշրջային վայրերի մասին, գիրքը չի կարող արագ ձեռք բերել, հեշտ է օնլայն տարբերակը: Սակայն գրքի տպագրությունը ևս անհրաժեշտություն է, այն լրիվ այլ նշանակություն ու կարևորություն ունի:
- Գիրքը պետք է լինի հայերեն, ռուսերեն, անգլերեն: Բայց ես կարծում եմ, որ այն մեծ օգուտ չի տա. միևնույնն է միայն շատ հետաքրքվածները ձեռք կբերեն ու կկարդան:
- Այս գործը բարձր մակարդակով կատարելու համար պետք են լավ պատմաբաններ: Մենք ունենք չբացահայտված շատ վայրեր, եկեղեցիներ, այլ պատմամշակութային կոթողներ. այդ ամենը ճիշտ ներկայացնելու բարձր պրոֆեսիանլիզմ է հարկավոր:

- Ես էլ եմ էն կարծիքին, որ գրքային տարբերակով չենք կարողանալու էնքան տարածել, որ մեծ շրջանակ ունենա: Սոցիալական հարթակների միջոցով ավելի արդյունավետ կլինի անելը:
- Այսպիսի հանդիպումները ես շատ դրական եմ գնահատում, որովհետև դրանց շնորհիվ մենք նաև ավելի տեղեկացված ենք դառնում:
- Գիրքը մեծ քանակությամբ պետք է նվիրել շատ կազմակերպությունների, զբոսաշրջային ընկերությունների, որպեսզի այն լայն տարածում գտնի:
- Իսկ ես կարծում եմ, որ լավ կլինի և՛ գրքային տարբերակ լինի, և՛ կայք:
- Պետք է համագործակցել թեկուզ Երևանի բոլոր տուրիստական կազմակերպությունների հետ, որպեսզի նրանք Գավառը ներառեն իրենց զբոսաշրջային երթուղիներում:
- Եթե այս ծրագիրը հաստատվի ու ֆինանսավորվի, թող որ դրա իրականացմամբ զբաղվեն լուրջ մասնագետներ:
- Հասմիկ Հովեյանի գիրքը շատ լավն է պատմական ակնարկի տեսանկյունից:
- Որպես Գավառի այցեքարտ մենք համարում ենք փախլավան, քյուֆթան, մեր սարերը և մեր հյուրընկալությունը. դրանք պետք է դառնան Գավառի առաջնային «բրենդը»: Միգուցե նաև հնությունը, քանի որ վերջերս սկսել են չափագրել նաև այստեղի քարանձավները, և դրանք էլ կարող են դառնալ նոր այցեքարտ:
- Կարելի է նախկին կայքը վերագործարկել, թարմացնել:
- Իմ պատկերացմամբ գիրքը կարող է ներառել տեսարժան վայրեր, լեգենդներ, տուրիստական կետեր:
- Կարելի է համագործակցել զբոսաշրջության կոմիտեի հետ այցեգիրքը արտերկրում տարածելու համար:
- Հիմա ակտիվ երիտասարդությունը Գավառում շատացել է, բոլորը կարող են իրենց ծանոթների, ընկերների միջոցով տարածել գիրքը:
- Մենք ունենք ԳոհՁոր, որը պետք է տեսնել, Իլիկավանք, Նորատուսի խաչքարեր, ունենք քարանձավ՝ Կլիկլոպյան ամրոցի տակ: Այս ամենը պետք է բարձր մակարդակով ներկայացվի:
- Ռուսերեն տարբերակն էլ է հարկավոր, քանի որ Հայաստանում այսօր շատ ռուս տուրիստներ ունենք, ու պետք է դա հասկանալի լինի իրենց:
- Երեկ Հայաստանի տարբեր քաղաքներից եկել էին մեր ընկերները, որոնց մենք ենք տեղանքը բացատրել քաղաք հասնելու համար:
- Կարևորը տեղեկացվածությունն է: Գրքի կամ սոցիալական ցանցերի միջոցով դա կլինի, այդքան էլ կարևոր չէ:
- Եթե չտեսնես, չես կարող պատմել: Ամեն բան բռենդինգի հարց է:
- Տեսարժան վայրեր ունենք, որոնց մասին մենք էլ տեղյակ չենք:
- Այցեգիրքը պետք է կազմել այնպես, որ տեղական արտադրողները կարողանան զբոսաշրջությունից եկամուտներ ստանան:
- Պետք է ունենանք աուդիո և վիդեո այցեգիրք, որը կօգնի ներկայացնել մեր տեսարժան վայրերը:
- Երիտասարդները, օրինակ Թումոյում սովորողները, կարող են զբաղվել այցեգրքի դիզայնով:
- Եթե դա մարդուն հետաքրքրի, ինքը կթարգմանի, թեկուզ ինքնուրույն: Պետք է լուսանկարներով ու տեսանյութերով մոտիվացվեն մարդիկ, որ կարողանան հետաքրքրվել ու այցելել:
- Մենք մեր տեսարժան վայրերի մասին չգիտենք, ուրիշները որտեղի՞ց իմանան:
- Արտագաղթը շատ մեծ է: Սա վտանգի տակ է դնում զարգացմանն ուղղված ցանկացած նախաձեռնություն:
- Մենք ծառայությունների ոլորտը պետք է վեր հանենք, ծառայությունների մատուցման մասնագետների մեծ անհրաժեշտություն ունենք, ովքեր հասանելի կլինեն զբոսաշրջիկին:

- Տրամաբանական չէ, որ շատ գումար հատկացվի բրոշուրների տպագրությանը: Ավելի լավ է տրամադրվի տարածմանը, մարքեթինգին:
- Այցեգրքի կառուցվածքի տեսանկյունից ես այսպես եմ պատկերացնում. սկզբում պետք է ունենա պատմական ակնարկ, հետո՝ բաժիններ, նաև՝ օրացույց:
- Ավագ սերունդը ճնշում է երիտասարդ սերնդին: Դա երևում է նաև մեր այսօրվա քննարկման ժամանակ՝ տարեցների կարծիքը գերակայող է սեղանի շուրջ: Ազա՛տ խոսեք, երիտասարդնե՛ր:
- Երիտասարդները կարող են իրենց սեփական սոցիալական էջերով նպաստել այցեգրքի տարածմանն ու գովազդին:
- Գավառը պետք է ունենա իր վեբ կայքը:
- Այցեգիրքը պետք է համակարգված, պատկերներով լեցուն ու գրավիչ տեսքով կազմված Pdf տարբերակով լինի համացանցում:
- Այցեգիրք կոչվածը ինքը դժվարություն չէ, պարզապես պետք է մի խումբ երեխաներ Սարվոր տուրիզմի և այլ կառույցների օգնությամբ իրենց մասնակցությունը ունենան օրինակ կանգառներում QR կոդեր տարածելու գործում:
- Կայքը պետք է գրավիչ լինի, լինեն պրոֆեսիոնալ ֆոտոներ, գեղեցիկ ակնարկներ և տպավորիչ վիդեոներ:
- Հյուրատների ստեղծումը Գավառում տուրիստական կյանքը բարելավելու թիվ մեկ խնդիրն է: Գալիս են, ցանկանում են մնալ, տեսնում են մնալու տեղ չկա, հետ են վերադառնում
- Տուրիստական այցեգրքի փոխարեն Գավառի տուրիզմի բրենդինգն է պետք ստեղծել:
- Այցեգրքի մեջ անպայման պետք է պատմել «Հովվի փառատոնի» մասին:
- Այցեգիրքը կարող է հետաքրքիր լինել այն ուսանողների համար, ովքեր պլանավորում են իրենց հանգիստը:
- Կարելի է նորարարական միջոցներ օգտագործել: Եվրոպայում շատ տարածված է՝ պատմամշակութային օբյեկտների վրա պահում ես հեռախոսը և ստանում ինֆորմացիա:
- Կայքի անհրաժեշտությունը միանշանակ կա: Կայքից օգտվելու հմտությունները խնդիր չեն:
- Հոլովակների պատրաստումը և տարածումը տուրիստական վայրերը ճանաչելի դարձնելու հարցում շատ մեծ դեր կարող են ունենալ:
- Սուրբ Խաչը պետք է դարձնել ուխտագնացության վայր. որևէ լեգենդ հորինել, որպեսզի այն դառնա Ղալթաղչու նման ուխտագնացության վայր:
- Ֆիդբեքային հետազոտություն անել արդյո՞ք անհրաժեշտ է:
- Գիրքը տարածելու մասով շատ ճանապարհներ կան, արդեն ասվածին ես կավելացնեմ հետևյալները. նվիրել տարբեր մարզերում, տալ գրադարաններին, գրախանութներին:
- Ծրագրավորողները կամ, օրինակ, Թումոյում կարող են զբաղվել QR կոդերի պատրաստմամբ:
- Բացի գրավիչ տեսք ունենալուց կայքը պետք է ունենա նաև հարուստ բովանդակություն, պարունակի տեղեկատվություն բոլոր զբոսաշրջային վայրերի մասին:
- Այցեգիրքը թող հիմնականում լինի տուրիստական կազմակերպությունների համար և գրավիչ փաթեթներ առաջարկի:
- Կայքը պետք է կարողանա արժեքներ փոխանցել: Պատմամշակութային արժեքներ պարունակի, որ մարդկանց հետաքրքրի:
- Այս ծրագիրն իրականում ծախս չէ համայնքային բյուջեի համար, այլ ներդրում: Համայնքը ներդրում կանի և այն կարճ ժամանակում հետ կվերադառնա բյուջե:

Սցենար 4. Փառատոնների քաղաք Գավառ. կարողությունների զարգացում

- Գավառը փառատոնների քաղաք դառնալու մեծ ներուժ ունի: Շատ լավ գաղափար է:

- Մենք առաջին հերթին գերխնդիր ունենք ձայնա-լուսային տեխնիկայի հետ կապված:
- Տեխնիկան թանկ բան է, համայնքապետարանն ունի՞ արդյոք այդքան ռեսուրս, որ տրամադրի:
- Շատ կարևոր գաղափար է, բայց ցանկալի է բարերարների դիմել այն իրականացնելու համար. վախենամ համայնքի ուժը չհերիքի:
- Այո, դրսից օգնություն է պետք, այսօր Գավառի թատրոնի շենքն էլ չունի համապատասխան տեխնիկա:
- Փառատոնի մասնակիցները հետո այլ մարդկանց կպատմեն, Գավառի՝ որպես փառատոնների անցկացման վայրի մասին տարբեր տեղերում կխոսեն՝ այդպիսով հաջորդ փառատոնին նոր մասնակիցներ ներգրավվելով:
- Մենք դարձել ենք երիտասարդական քաղաք, պետք է շատ միջոցառումներ կազմակերպվեն: Փառատոնների անցկացումը կզարգացնի տնտեսությունը Գավառում:
- Ինչքան շատ փառատոն լինի այս տարածաշրջանում, այնքան կկոտրվեն այստեղի կանանց կարծրատիպերը:
- Եթե գույք և համապատասխան տեխնիկա ձեռք բերենք, դա մեզ կստիպի ավելի հաճախակի կազմակերպել միջոցառումներ: Սա շատ լավ է:
- Սեփական տեխնիկա չունենալու դեպքում այլ աղբյուրներից վերցնելը կարող է վատացնել փառատոնային միջոցառումների որակը:
- Ես էլ եմ նույն կարծիքին՝ լավ կլինի հովանավորներ ձեռք բերել ծրագիրն իրականացնելու համար:
- Իմ կարծիքով ոչ այնքան առաջնային է այս հարցը:
- Գավառի հարակից շրջաններից Գավառ գալու խնդիր ունեն երիտասարդները: Այս խնդիրն էլ պետք է լուծել բոլորի ներգրավվածությունը փառատոններին ապահովելու համար:
- Որակյալ տեխնիկան կնպաստի, որ երեխաները նորից ու նորից ուզենան մասնակցել փառատոնների:
- Եթե մեծ գումար չի անհրաժեշտ, պետք է ձեռք բերել սեփականը և սկսել նախագիծը:
- Ես կարծում եմ, որ ավելի հետաքրքիր կլիներ ընտանեկան սպորտային մրցումները: Ես ժամանակին ընտանիքիս հետ մասնակցել եմ: Գոնե տարվա մեջ մի անգամ կարելի է բոլորին ներառել:
- Տեխնիկան կարող է նաև վարձակալությամբ տրվել, հավելյալ միջոցներ բերելով համայնքի բյուջե:
- Ո՞վ մինչև գիշերը ժամը 2-ը կմնա Գավառի հրապարակում, ոչ մեկը. կարծրատիպերը պետք է կոտրենք:
- Ծրագրի իրականացման համար կարելի է դիմել դոնորների:
- Երեխաների մոտ կձևավորվի բեմ բարձրանալու մշակույթը: Տարածաշրջանի երեխաները կսկսեն չկաշկանդվել բեմից և հաճույք կստանան:
- Սրանից ավելի կարևոր հարցեր կան:
- Բացի գույքից ունենք ենթակառուցվածքների խնդիր, դրսից գալիս են ու տեղ չկա մնալու:
- Համալսարանում դասերը վերջանալուն պես երեխաները վազում են տուն, քանի որ տրանսպորտ չկա ավելի ուշ ժամի վերադառնալու համար: Հետևաբար տարբեր միջոցառումների մասնակցելու հարցը դուրս է մնում նրանց օրակարգին:
- Բոլոր փառատոնները պետք է անցկացվեն Գավառու՞մ, էլ հանրապետությունում ուրիշ տեղ չանե՞լ փառատոն:
- ՋԼՄ-ների միջոցով ակտիվ պատմել է պետք անցկացվելիք փառատոնների մասին:
- Օրինակ Ավագ դպրոցում կազմակերպվում է միջոցառում, որտեղ ամեն դասարան ներկայանում է իր սեղանով:
- Պետք է իրականացնել ազգային արժեքներ փոխանցող փառատոններ:

- Այս ծրագրի վրա փողեր փոշիացնելուն ես դեմ եմ, ինչքան էլ տեխնիկա լինի, դա իրատեսական չէ:
- Մենք բոլոր ռեսուրսներն ունենք ծրագրի իրականացման համար, քաղաքի ճարտարապետությունն էլ նպաստում է դրան:
- Պետք է անհատ ձեռներեցներին ոգևորել, որպեսզի ներգրավվածություն ունենան և իրենց ներդրումն ունենան գույքի ձեռքբերման հարցում:
- Գավառում հեծանվավարությունը զարգացած չէ: Սա մի ուղղություն է, որ պոտենցիալ ունի:
- Հյուրանոցի խնդիր ունենք, մենք հանրապետությունից կարող ենք մարդիկ բերել այստեղ: Իսկ որտե՞ղ պահենք:
- Եթե նման միջոցառումների ժամանակ լինեն մրցանակներ, մարդիկ ավելի ոգևորված կլինեին:
- Կարող ենք Սբ. Խաչի ուխտագնացության օրը դարձնել ավելի հայտնի, որ ոչ միայն գավառցիները գան, այլ նաև այլ շրջաններից:
- Փառատոնները կարևոր են, բայց սա երկրորդային հարց է:
- Փառատոնները կարելի է զուգակցել զբոսաշրջային տուրերի հետ:
- «Գավառը փառատոնների քաղաք». սա ուտոպիստական գաղափար է:
- Այս ծրագրի համար ռազմավարություն է պետք կազմել, շարունակությունը պետք է կոնկրետ ու տեսանելի լինի: Գույքն ու տեխնիկան գնեցինք, հետո՞:
- Երիտասարդներին պետք է ներգրավվել փառատոններում իրազեկման ճանապարհով, որ տարբեր գյուղերի տաղանդավոր երիտասարդները կարողանան տեղեկանալ և մասնակցել փառատոններին:
- Լավ կլիներ հայտնի մարդկանց ներգրավվել Գավառի փառատոնների մասին պատմելու գործում: Օրինակ՝ Արմենչիկը գա, մասնակցի:
- Տարին մեկ անգամ փառատոնային միջոցառումներ իրականացնելու դեպքում կարիք չկա այդքան գումար հատկացնելու գույքին:
- Ընդհանուր առմամբ այս ծրագիրը լավ է ներկայացված, այս տարի երիտասարդության մայրաքաղաք ճանաչվելը պարտավորեցնում է մեզ ավելի շատ միջոցառումներ կազմակերպել:
- Իսկ բարտերային համագործակցության տարբերակներ չկա՞ն:
- Կարծրատիպային մտածելակերպը խանգարում է երիտասարդներին օգտվելու սրճարաններից, ժամանցի կենտրոններից: Էլ ուր մնաց փառատոնները...
- Գավառում ինչ էլ բացվում է, երկար չի աշխատում եկամուտ չապահովվելու պատճառով:
- Փառատոններ իրականացնելը բավականին բարդ է: Մեր Գավառում պետք է օգտագործվի և ավելացվի տաղանդավոր երիտասարդների ներուժը:
- Վարդավառը, օրինակ, մեզ մոտ շատ պասիվ է: Պիտի փորձենք տոները դարձնել փառատոններ, ինչպես նաև փառատոնի ընթացքում երիտասարդներին ցույց տանք տոնի իմաստը, որպեսզի ոչ միայն ջուր նետեն իրար վրա, այլ հասկանան դրա իմաստը:
- Հարկավոր է այս գաղափարն իրականացնել այնպես, որ նպաստի մենթալիտետի փոփոխությանը:
- Օրինակ՝ Գյումրին արհեստների և արվեստների քաղաք է, այնտեղ սա հնարավոր է: Մեզ մոտ՝ կասկածում եմ: Գավառը մշակութային քաղաք լինելուց շատ հեռու է:
- Եթե փառատոնները շատանան, շատ լավ կլինի, երիտասարդները հնարավորություն կունենան լավ ժամանակ անցկացնելու: Նաև այդ փառատոնները կարող են տեղեկատվական բնույթ կրել:
- Կարելի է կազմակերպել խաղեր, օրինակ «իսկական գավառցի», որը հնարավորություն կտա երիտասարդներին ստանալ նոր տեղեկություններ իրենց համայնքի մասին:
- Եթե, օրինակ, փառատոնները թեմատիկ լինեն, ավելի հետաքրքիր կլինի:

- Մարդկանց մտածելակերպը փոխելը շատ դժվար է: Մենք առաջին հերթին այստեղ հենց մտածելակերպ փոխելու խնդիր ունենք:
- Փառատոնը ունեցածի ցուցադրումն է, մենք ցուցադրելու ի՞նչ ունենք:
- Շատ լավ կլիներ, որ երաժշտական փառատոնները լինեին մեր համայնքում, այլ ոչ թե մեծ քաղաքում:
- Իսկ օրինակ սպորտային փառատոնը Գավառում չի աշխատի:
- Փառատոններին մասնակցությունը տեղի բնակիչների, տեղական արտադրողների, արվեստի դպրոցի սաների համար պիտի լինի անվճար:
- Մեր Գավառը միշտ մարդկանց հետաքրքրում է իր ավանդական ճաշատեսակների պատրաստմամբ, բայց, այո, մեծ միջոցառումներ են էլ պետք, իսկ դրանց համար կա նաև տեխնիկայի բացակայության խնդիր:
- Գավառում երաժշտական փառատոնը հաստատ կաշխատի:
- Գավառի երիտասարդությունը ձգտում է Երևանում կամ այլ երկրում գտնել հետաքրքրություններ, բայց չէ՞ որ հետաքրքրություններ ստեղծողն էլ ենք մենք: Օրինակ Վանաձորում մարդիկ դարձել են ավելի ազատ մտածող, նույնը կարող ենք անել մենք:
- Անհրաժեշտ են պրոֆեսիոնալ գործիքներ, նորմալ տաղավարներ: Շատ բան:
- Անհրաժեշտ է համագործակցել ՀԿ-ների և ձեռներեցների հետ: Համայնքի բոլոր ներկայացուցիչներին ներառել այս գործում:
- Կապ չունի, որ թանկ են, կարևորը՝ սեփական լինի:
- Գավառում աղջիկներն ավելի շատ են ներգրավված գործընթացներում, քան տղաները:
- Ուզում եմ ասել, որ փառատոնների քաղաք ունենալու համար պետք է ունենալ լավ մտածված թեմատիկա: Պետք է փորձագիտական խումբ ձևավորել՝ հասկանալու համար թե ինչ կարող է տալ Գավառը:
- Պետք է համահունչ լինի գույքի ձեռքբերումը և փառատոնների քանակը, այսինքն գույքը պետք է ձեռք բերել երկարաժամկետ հատվածի համար ու, միևնույն ժամանակ, ամեն ինչ անել, որ տարեկան մեկ-երկու փառատոնով չսահմանափակվենք:
- Թող դպրոցների համար այդ տեխնիկան ձեռք բերվի, իսկ փառատոնների ժամանակ դպրոցներից վերցնեն:
- Ինչ էլ քննարկենք, զբոսաշրջային կամ փառատոնների քաղաք դառնալու համար Գավառի թիվ մեկ խնդիրը այցելուների գիշերակացի հարցն է: Առաջինը դա պետք է անենք, դա շղթայական կապված է փառատոնների և մյուս գաղափարների հետ:

Սցենար 5. Երիտասարդների համար մարզաառողջարանային համալիրի հիմնում

- Այո՛, չկան լողավազաններ երիտասարդների համար: Այո՛, պետք են: Բայց այս հարցն առաջնային չէ. նման թվով մարդ չկա Գավառում, որոնք կուզենան այցելել:
- Էս Գավառից ամենահեռու թեման ա:
- Պետությունը պետք է աջակցի, որովհետև սա իրականություն դարձնելու համար մեծ ծախսեր են պահանջվելու:
- Ստորտային ոլորտի ներկայացուցիչ լինելով ասեմ՝ մենք ունենք սպորտդպրոց, բայց ոչ համապատասխան մասնագետներ: Ես ինքս բացել եմ վերականգնողական կենտրոն և ունեմ համապատասխան մասնագետներ, բայց մինչև «դանակը չի հասնում ոսկորին», մարդիկ չեն դիմում:
- Կենտրոնը պետք է ունենա առողջ ապրելակերպի դասընթացներ, ինչը խիստ անհրաժեշտ է:
- Եթե Գավառը Ջերմուկի նման առողջանային կենտրոն դառնա, իրատեսական կլինի նման համալիր ստեղծելը:

- Գավառում կա մարզադպրոց, սակայն այն աղջիկներին չի կարող ծառայել:
- Կարող են այլ տեղերից էլ մարդիկ գալ Գավառ վերականգնողական բուժման համար:
- Երբ երեխաները ցանկանում են լողավազան հաճախել, ծնողները նրանց ուղարկում են Հրազդան, քանի որ Գավառում չկա:
- Կարծրատիպային մտածողության պատճառով աղջիկները չեն հաճախում մարզադպրոց:
- Լողավազանի դեպքում պետք է կենտրոնանալ կա՛մ վերականգնողական բուժման վրա, կա՛մ մարզիկների մարզումների վրա:
- Պիտի կարողանանք բարձրացնել լողավազան հաճախելու գրավչությունը, երիտասարդները պետք է պարտադիր լողալ իմանան՝ հաշվի առնենք, որ Սևանը մեզ մոտ է:
- Իմ 4 տարեկան թոռնիկին ինքս տանում են Հրազդան լողի, բայց նա հմտացած է ֆուտբոլում: Կասե՞ք այստեղ ում մոտ տանեմ երեխային, որ նրան դարձնի Ռոնալդո կամ հայտնի մի ֆուտբոլիստ:
- Աղջիկները կօգտվեն, եթե լինի առանձնացված լողավազան միայն աղջիկների համար:
- Այնպես պետք է լինի, որ բոլորս գոնե շաբաթական մեկ անգամ կարողանանք հաճախել լողավազան, և այն պարտադիր լինի մարզիչով:
- Ես լավ ըմբիշ եմ եղել, բայց ինձ ստիպել են գնալ գիտության ճանապարհով, որի տակն էլ բան չկա:
- Մարզաառողջարանային համալիրի գոյությունը կտա թիրախային խմբերին առանձնացնելու և ավելի հասցեական աշխատելու նոր հնարավորություններ:
- Ծախսերի հարցը պետք է լուծվի: Պետք է հասկանալի լինի տեղում աշխատող բժիշկների, մարզիչների աշխատավարձն ով է վճարելու:
- Կարող ենք ունենալ պրոֆեսիոնալ մարզիկներ, և եթե կան երիտասարդներ, ովքեր ուզում են սպորտով զբաղվել, ապա հնարավորություններ իսկապես չկան:
- Մինչև այս ամեն ինչի սկսելը կա գենդերային անհավասարության խնդիր: Օրինակ աղջիկներն ուզում են գնալ խմբակների, բայց անհարմարության պատճառով չեն շարունակում հաճախել: Առաջին մեծ խնդիրը մենթալիտետի փոփոխությունն է:
- Կարծում եմ՝ ծնողները կխնայեն երեխաների առողջ ապրելակերպի համար լրացուցիչ ծախսեր անելու հարցում:
- Գավառում նախ պետք է վերացնել գենդերային անհավասարությունը: Կարծրատիպը կոտրելու համար ես վեց տարի գնացել եմ վոլեյբոլի, ու իմ մարզիչն ինձ չէր կարողանում բացատրեր նենց, ոնց տղաներին: Ես գնացի քաղաքապետարան ու առաջարկեցի աղջիկների վոլեյբոլի թիմ ստեղծել, բայց ինձ մերժեցին:
- Մարզաառողջարանային համալիրը կունենա նաև լուրջ բուժական նշանակություն:
- Հասանելիության հարց կա. այնպես պիտի լինի մարզադպրոցը, որ հասանելի լինի բոլորին, ես նկատի ունեմ ֆինանսապես հասանելի:
- Հիմնական մինուսը կլինի այն, որ երիտասարդները պասիվ կլինեն. մոտիվացնող բան է պետք մտածել:
- Մենք պետք այդպիսի կենտրոն ունենանք, որ տաղանդների բացահայտում կարողանանք անել այնտեղ: Ո՞վ ասաց, որ Գավառի մարզաառողջարանային համալիրից ապագա օլիմպիական չեմպիոններ չեն դուրս գա:
- Համալիրի գոյությունը կօգնի նաև 2020 թվականի պատերազմի մասնակիցներին առաջնահերթության կարգով օգտվել վերականգնողական բուժումից:
- Եթե հնարավոր չլինի առանձնացված տարածքների հարցը լուծել, կարելի է ժամեր սահմանել աղջիկների համար և տղաների:
- Գավառի կլիման թույլ չի տա բացօթյա լողավազաններ ստեղծել, բայց անհրաժեշտ է, որ մեր երեխաները գնան լողալ սովորելու, քանի որ դա նպաստում է առողջության պահպանմանը:

- Բոլորը սպասում են այս գաղափարի իրականացմանը, առաջին կարևոր քայլը դա կլինի: Մեզ իսկապես պետք են սպորտային տարբեր խմբակներ առողջ ապրելակերպի համար:
- Եթե մենք ունենանք համալիր այն կարող է համագործակցել դպրոցների, մանկապարտեզների հետ:
- Աղջիկները կաշկանդվում են նման տեղեր գնալուց, որովհետև բացի մենթալիտետի հետ կապված խնդիրը, երիտասարդ տղաներն էլ իրենց դրսևորելու ճիշտ ձև չգիտեն:
- Մենք ունենք պատերազմի մասնակից վիրավորներ, ովքեր չունեն ռեսուրս ամեն անգամ Երևան հասնելու. նման համալիրի ստեղծումը բնականաբար անհրաժեշտ է:
- Աշխատատեղերի տեսանկյունից էլ սա լավ գաղափար է, կստեղծվեն բազմաթիվ նոր աշխատատեղեր:
- Համալիրն ավելի իրատեսական է՝ որպես երիտասարդների ժամանցի վայր:
- Օլիմպիական չեմպիոն չունենք, մրցանակներ չունենք, ֆուտբոլի թիմ չունենք. 1970-ականներին ունեինք, կորել է այս ամեն ինչը. մարզադպրոցները փակվեցին, տրադիցիա չկա:
- Յուրաքանչյուր խնդրի լուծում պետք է սկսենք հենց մեզանից:
- Գազի զապրավկայի հետևում ամենաճիշտ տեղն ա համալիրի ստեղծման համար:
- Վերահսկողության հարցը պետք է լինի՝ աղջիկներն ու տղաները տարբեր լողավազաններից օգտվեն կամ տարբեր ժամերի:
- Մեր մոտ կա այգի, աղջիկները չեն գնում, որովհետև չկան սահմանափակումներ:
- Մարզաառողջարանային համալիրը պետք է նաև նույն զբոսաշրջության զարգացման տեսանկյունից:
- Իմ տղան սպորտդպրոցում հաճախում էր բասկետբոլի, բայց դադարեց գնալ մարզչի անտարբերության պատճառով: Համալիրի գոյությունից բացի նաև սրտացավ անձնակազմի հարց է առաջանալու:
- Պետք է լինեն նաև հիմնադրամներ, որոնք կաջակցեն նրանց, ովքեր պոտենցիալ ունեն, բայց հնարավորություն չունեն:
- Ավելի լավ է որևէ կառույցին կից ստեղծվի համալիրը, քան նորը կառուցվի:
- Համալիրում կարգ ու կանոնի վերահսկողությունը շատ կարևոր է մեր Քյավառի համար:
- Անհրաժեշտ ա երիտասարդների շրջանում սեր սերմանել սպորտի նկատմամբ: Բայց աղջիկները, ովքեր սեր ունեն դեպի սպորտը, չեն զբաղվում դրանով հենց կարծրատիպերի պատճառով:
- Համալիրում կարող են լինել և՛ սիրողական, և՛ պրոֆեսիոնալ մարզումներ:
- Մենք մեծ գումարներ ենք վճարում գետի ափին ժամանցի համար, բայց կարող ենք ունենալ մերը՝ ինչու՞ ներդրում չանենք:
- Մենք անընդհատ խոսում ենք միայն լողավազանի մասին, բայց պակաս կարևոր չէ այն, որ մարզաառողջարանային համալիրը կկարողանա պատերազմից տուժած երիտասարդների համար առողջարարական ծառայություններ մատուցել, որպեսզի նրանք ամեն անգամ չգնան հասնեն մայրաքաղաք:
- Կա մարդ, ով 60 տարեկան է, բայց ուզում է լողալ սովորել: Համալիրը պահանջված է բոլոր տարիքային խմբերի կողմից:
- 1970-ականներին բոլորս Բալագոզյաններին էինք հետևում՝ որպես հանրահռչակ մարզիկների, նրանք մահացան և ամեն բան վերացավ:
- Նպատակահարմար է սպորտդպրոցին կից կառույց ունենալ, քան նորը կառուցել:
- Եթե էդ բոլոր խմբակները բացվեն, մարդիկ մեկ ա չեն կարող էդքան փող տան երեխաներին տանեն էդ բոլոր խմբակներին:
- Եթե համալիրը մարդկանց ֆինանսապես հասանելի չլինի, իմաստ չկա այն բացելու:
- Գավառում կան սպորտային ակումբներ, բայց ոչ բարվոք վիճակում են գտնվում:

- Ավելի լավ է լինի կոնկրետ լողավազանների համար սեռային սահմանափակումներ, որպեսզի տարբեր սեռերի համար ամեն ինչ տարբեր լինի:
- Պետք ա երեխաների համար բացվի, որովհետև մեծերը հաստատ չեն գնալու:
- Լավ է կենտրոնանալ բացելուց հետո կարգուկանոն ապահովելու հետևողականության վրա:
- Եթե առանձին խմբերով լինի, հաստատ շատերը կգնան: Օրինակ լողի դասընթացներով հաստատ շատերը հետաքրքրված են:
- Մարդիկ աշխատանք չունեն, գումար չունեն, որ այցելեն համալիր:
- Այսօր երիտասարդության մեծ մասը ձգտում են սպորտով զբաղվել, շատերը տրանսպորտի գումար են հավաքում և գնում Հրազդան՝ լողավազանից օգտվելու համար:
- Յուրաքանչյուր նոր բան բացելու դեպքում պետք է կառավարվի և համակարգվի ճիշտ, որպեսզի չառաջանա երկու սեռերի հաճախելիության խնդիր:
- Մի փոքր պարտադրանք էլ է պետք, պարտադիր կերպով կազմակերպությունում թող լինի երգի և պարի խմբակ, հրավիրվեն մասնագետներ, ովքեր կբավարարեն պահանջներ, մի քանի մեդալներ կբերեն, և բոլորը կոգևորվեն ու կսկսեն հաճախել:
- Առողջարանային համալիրը հիմնելուց հետո միգուցե հնարավոր լինի փաթեթներ կազմել և ներառել դրանք սոցփափեթներում:
- Համալիրի առկայությունը կոգևորի Գավառի բնակիչներին սպորտով, լողով զբաղվել:

Սցենար 6. Նոր երիտասարդական կենտրոնի հիմնում

- Նախ պետք է այս ծրագրի պահանջն ուսումնասիրել, մասնակիցներ ապահովել, հետո նոր իրականացնել, որովհետև կոնկրետ իմ համար այդքան էլ կարևոր չի սա:
- Այս ծրագրում սխալներ կան. «Ռեստարտ-Գավառում», օրինակ, նույնիսկ ունենք քառասուն տարեկան անդամ:
- Փաստացի բարձր տարիքային խումբն այսօր դուրս է մնում նման հնարավորությունների դաշտից:
- Տարիքով երիտասարդներն իսկապես կենտրոն չունեն, որպեսզի քննարկումներ անեն:
- Մենք ունենք կենտրոններ, սակայն դրանք կից չեն նախարարությանը:
- Երիտասարդական կենտրոնը կարող է գործել որպես ոչ-ֆորմալ կրթության վայր:
- Կա տեղեկատվության բացակայության խնդիր, քանի որ կան տարբեր կենտրոններ:
- Եղած երիտասարդական կենտրոնը չի սպասարկում 18-35 տարեկան երիտասարդներին:
- Երիտասարդական կենտրոնում կարող են ներգրավվել նաև մինչև 35 տարեկան Արցախից տեղափոխված մեր հայրենակիցները:
- Պետք է լինեն երիտասարդական կառույցներ Գավառի հարակից շրջաններում ևս:
- Օգտագործելով եղած մասնագիտական ներուժը՝ պարզապես կարելի է արդեն գոյություն ունեցող կենտրոններում բարձրացնել տարիքային շեմը:
- Ինչքան շատ լինեն կենտրոնները, այնքան լավ: Միևնույն ժամանակ տարբեր կարիքներ են լինում, որոնք մեկ կառույցը չի կարող բավարարել:
- Առանձին կենտրոն ստեղծելու փոխարեն հին կենտրոններում տարիքը պետք է բարձրացվի և վերջ:
- Նորը բացելու ու ավելի ֆինանսներ ծախսելու փոխարեն կարելի է բարձրացնել արդեն առկա կենտրոնների տարիքային վերին շեմը:
- Մեղավոր չի այն կինը, ում ամուսնացնում են 16 տարեկանում, և նրա կրթությունը կիսատ է մնում. այս ծրագրում անհրաժեշտ է հենց նման խմբերին ընդգրկել:

- Կարիք չկա ավելորդ ծախսեր անելու: Կառավարման հարց է. տարբեր տարիքային խմբեր կարող են տարբեր ժամերի իրենց քննարկումներն անել:
- Գավառը զարգացման փուլում է, պետք է համագործակցել նման կենտրոնների հետ, ես ՀԿ անդամ եմ, օգնությունը մեզ չէր խանգարի:
- Մենք՝ երիտասարդներս, ունենք մեծերի կարիքը. անհրաժեշտաբար նման խմբերում պետք է ընդգրկել մեծահասակների և խելացի մարդկանց:
- Այս տարի երիտասարդության կենտրոնը Գավառն է, իսկ երիտասարդներին ակտիվ պահողները ՀԿ-ներն են:
- Երիտասարդների տունը նպաստում է օտար լեզուների իմացությանը, ֆիզիկական զբաղվածությանը, երիտասարդները սոցիալապես ավելի ակտիվ են լինում, տալիս է ինքնադրսևորվելու հնարավորություն, տալիս է նոր գիտելիքներ, նոր հմտություններ, նոր շրջապատ:
- Անհրաժեշտ են ծրագրեր, որոնք նախատեսված չեն միայն տվյալ կենտրոններում ներգրավված տարիքային խմբերի երիտասարդների համար, օրինակ ծրագիրը չլինի միայն մինչև 18 տարեկանների համար, այլ ավելի բարձր:
- Էական տարբերություն չի լինի արդեն գոյություն ունեցող կենտրոնների աշխատանքի հետ:
- Երիտասարդներին իրար գլուխ հավաքելը օգտակար գործ է: Պետք բոլորը իրար հետ շղթայված լինեն, որ նոր մտքեր ծնվեն: Ինչպես ասում են՝ որ արևը շողա:
- Երիտասարդական կենտրոնը կնպաստի երիտասարդների զարգացմանը:
- 17-18 տարիքում էմոցիոնալ դաշտն է գործում, ավելի մեծ տարիքում գալիս է գիտակցական մակարդակը. դա է պատճառը, որ երիտասարդներին ուղղված նախաձեռնություններում անհրաժեշտ է մեծահասակների դերը:
- Երիտասարդական կենտրոնը փորձի փոխանակման լավ հարթակ կարող է լինել:
- Եթե նոր կենտրոններ բացվեն, մրցակցություն կլինի կենտրոնների միջև:
- Համայնքապետարանում կամ «Ռեստարտում» կարող են երիտասարդության համար միջոցառումներ կազմակերպել՝ նոր կենտրոն հիմնելու կարիք չկա:
- ՀԿ-ների ծրագրերը պետք է շատ ու խոշոր լինեն, անեն մեծ գործեր, որ երիտասարդներն ակտիվանան:
- Նման երիտասարդական ծրագրերին մեր համայնքի տղաների մասնակցությունը բավականին խնդրահարույց է: Երբ երիտասարդ տղան մասնակցում է երիտասարդական ակտիվիզմի տարրերով նախաձեռնություններին մյուս տղաների շրջապատում կարող է դառնալ ծաղրի առարկա:
- Երիտասարդական կենտրոնում ի՞նչ ուղղվածություն պետք է ստանա երիտասարդը: Դա՛ պետք է հասկանալ: Այլապես այն հանդիսանալու որպես զուտ ժամանցի վայր:
- Ես կարծում եմ, որ բոլոր կենտրոններում էլ հիմնականում նույն մարդիկ կլինեն:
- Նոր երիտասարդական տունը թող լինի ոչ թե Գավառում, այլ գյուղերից մեկում:
- Մի աղջիկ կա, ակտիվորեն մասնակցում է Էրազմուս ծրագրերին: Կարելի է նույնը կազմակերպել Գավառում: Գավառում էլ շատ երիտասարդներ կան, որ հետաքրքրված են, բայց ՀԿ-սակավությունը խոչընդոտում է այս գործին:
- Գաջետների պատճառով իրար հետ պարզ մարդկային հաղորդակցման խնդիր ունենք: Այս ծրագիրը նաև այս խնդրի լուծմանն է նպաստում:
- 12.000 երիտասարդ չի կարող միանգամից լինել շահառու նման կենտրոնի, պետք է պարզել պահանջարկ կա՞ նման կենտրոնի, թե ոչ:
- Լուրջ կենտրոնների հիմնումը միանշանակ ողջունելի է: Այդ կենտրոնները կարող են լինել տարատեսակ՝ մշակութային, սպորտային, ռազմական և այլն:
- Առաջինը պետք է երիտասարդներին սովորեցնել կարդալ: Շատ կարդալ:

- Եթե կենտրոնը պետք է լինի Գավառում, ապա անհրաժեշտ է, որ մոտ բնակավայրերի երեխաներն ապահովվեն տրանսպորտային միջոցներով, որպեսզի կարողանան հեշտությամբ նույնպես գալ ու մասնակցել:
- Եթե երիտասարդը ցանկություն ունի որևէ ծրագիր գտնելու ու մասնակցելու, ապա, հավատացնում եմ ձեզ, անպայման կգտնի անկախ նման կենտրոնների գոյությունից:
- Ինչքան շատ երիտասարդական կենտրոններ լինեն, այնքան լավ և ընտրությունը մեծ:
- Երիտասարդների տունը լավ է բացվի հենց մարզկենտրոնում՝ այդպիսով նպաստելով նաև միջմարզային շփմանը:
- Մեկ կենտրոնի գոյության պարագայում երկրորդը ստեղծելիս այն կա՛մ պետք է լինի նոր վայրում, կա՛մ այլ ուղղվածության, այլապես առաջնահերթություն չէ:
- Իմ կարծիքով 18 տարեկանից բարձրերը հետաքրքրված չեն լինելու այս կենտրոնով, որովհետև այդ տարիքային խմբի երիտասարդները կա՛մ դասի են, կա՛մ աշխատում են: Իսկ աղջիկներն ընդհանրապես կաշկանդված են:
- Երիտասարդական կենտրոնը պետք է համագործակցի համայնքապետարանի, պետական մարմինների հետ՝ համայնքում առկա խնդիրները լուծելու համար:
- Սա առաջնահերթ ծրագիր չեմ կարող համարել, որովհետև կան երիտասարդական կենտրոններ Գավառում, նորի անհրաժեշտությունը չեմ տեսնում:
- Ես շատ կուզեմ, որ ռազմական ակադեմիա լինի /ասում է աղջիկը/: Բայց եթե լինի, մեկա չի աշխատի /ասում է տղան/:
- Կենտրոնը պետք է հենց երիտասարդների կողմից ձևավորված հայեցակարգ ունենա՝ հիմնված լինելով երիտասարդների կարիքների վրա:
- Սևանի «Բոհեմ» արհեստանոցի պես մի վայր կարող է լինել այս կենտրոնը: Բայց ավելի լավ է տեղեկատվական գործառույթ ունենա՝ մարդկանց իրազեկի երիտասարդական ծրագրերի մասին:
- Ավելի լավ է հանրայնացնել, զարգացնել, հզորացնել առկա կենտրոնները, քան բացել նորը:
- Ամեն բան կախված է, թե ոնց կկազմակերպվի կենտրոնի աշխատանքը. միայն տարածքը չլինի և վերջ: Եթե ամեն բան ճիշտ և գրագետ կազմակերպվի երիտասարդները կգան, ինչու՞ ոչ:
- Իմաստ չկա նոր երիտասարդական կենտրոնի, քանի որ կան կավագործություն և այլ արվեստներ ուսուցանող կենտրոններ Գավառում:
- Երիտասարդական կենտրոն հիմնելուց բացի, երիտասարդների հետ պետք է աշխատեն որակավորված մասնագետներ:
- Նոր կենտրոնի ստեղծումը, իրենց ուշադրության կենտրոնում պահելը երիտասարդության մոտ կձևավորի գնահատված լինելու զգացում:
- Նախ և առաջ անհրաժեշտ է աշխատատեղ, հետո նոր կենտրոններ, որոնք կապահովեն ժամանցը:
- Ավագանու նիստերին երիտասարդների պարբերաբար մասնակցությունը նույնպես կարող է դրական ազդեցություն ունենալ:
- Մենք ունենք խնդիր, որ ՀԿ-ների երիտասարդական տների անդամները հիմնականում նույն երիտասարդներն են, նույն մարդիկ են ներգրավված շուրջ երկու, երեք տարի է:
- Ավելի լավ է աշխատել երիտասարդների նոր շրջանակների ներգրավման վրա:
- Երիտասարդական կենտրոնները կարող են մասնագիտանալ տարբեր միջոցառումների վրա. մեկը կունենա առավելություն այս ոլորտում, մյուսը՝ այլ, ասենք փառատոնների կազմակերպման, երրորդը՝ վերապատրաստումների գործում և այլն: Գավառում կան ՀԿ-ներ և նրանք, աջակցություն ստանալով, կարող են կատարել կենտրոնի գործառույթները:

6. Քվեարկությունների արդյունքները





Հավելված 2. Ցուցումներ սեղանավարներին և գրառողներին

Ցուցումներ Գավառի համահամայնքային քննարկման սեղանավարների (facilitator) համար

Ձեր խնդիրն է ուղղորդել քննարկումը, կարգավորել այն, դարձնել միաժամանակ և՛ լուրջ, և՛ ուրախ, արդյունավետ ու չհոգնեցնող:

Ձեր սեղանի շուրջ կլինեն 10-15 մասնակիցներ, մոտ կեսը կլինեն երիտասարդներ, մյուս կեսը՝ ավելի բարձր տարիքի քաղաքացիներ, նրանք տարբեր մասնագիտության, տարբեր նախասիրությունների տեր տղաներ ու աղջիկներ, կանայք ու տղամարդիկ են, ում քննարկման ժամանակ միավորում է մեկ բան. նրանք բոլորը Գավառ խոշորացված համայնքի բնակիչներ են և հավաքվել են մտածելու Գավառի երիտասարդների խնդիրների շուրջ: Քննարկման կդրվի 5 սցենար, 5 տարբեր իրականանալի ծրագրային գաղափարներ: Մի քանի կարևոր կետ.

- Հստակորեն ներկայացրեք քննարկման կանոնները, կարևորեք՝ միշտ խոսում է միայն մեկը սկզբունքը:
- Առաջին անգամ խոսելիս խնդրեք, որպեսզի մասնակիցը ներկայանա՝ առնվազն մեկ անգամ ևս նշելով համայնքը կամ աշխատանքային ոլորտը:
- Յուրաքանչյուր սցենարի վերաբերյալ քննարկումներն սկսելուց առաջ կարող եք հակիրճ՝ 5-6 սեղմ նախադասությամբ ամփոփել սցենարի հիմնական դրույթները:
- Այս ներկայացման ժամանակ փորձեք խուսափել այնպիսի բառեր օգտագործելուց, որոնք հատուկ են ակադեմիական կամ մասնագիտական լսարանին, խոսեք պարզ ու մատչելի լեզվով:

- Աշխատեք ձեր ներկայությունը դարձնել աննկատ, միաժամանակ քննարկման տեմպը պահեք Ձեր ձեռքում: Ինքներդ քննարկմանը մի մասնակցեք, այլ հարցերով փորձեք ներգրավել սեղանի շուրջ գտնվող բոլոր մասնակիցներին:
- Արտահայտվելու հնարավորություն տվեք բոլորին, սակայն մի պարտադրեք խոսել նրանց, ովքեր գտնում են, որ ասելիք չունեն: Կարող եք նորից անդրադառնալ տվյալ մասնակցին, բայց փոքր-ինչ ավելի ուշ:
- Կարող եք ուղղակիորեն դիմել մասնակիցներից որևէ մեկին, այնուհետև ձախից աջ, կամ մեկ այլ սկզբունքով, օրինակ՝ ըստ համայնքների, խրախուսել մասնակիցներին, որպեսզի արտահայտվեն: Միաժամանակ, փորձեք խուսափել քննարկումը երկխոսության վերածելուց:
- Երբ մասնակիցը փորձում է արտահայտել իր կարծիքն ու վերաբերմունքը, նշաններով ցույց տվեք, որ ուշադրությամբ հետևում եք նրա խոսքին, գլխի կամ ձեռքի երևացող շարժումներով ցույց տվեք, որ արտահայտվող կարծիքը խիստ արժեքավոր է և խրախուսեք նրան լինել առավել անկաշկանդ:
- Հարցերը փորձեք ձևակերպել համառոտ և աշխատեք խուսափել հարցերից, որոնք «այո» և «ոչ» պատասխաններ են ենթադրում: Փոխարենը մշտապես տվեք «ինչո՞ւ» և «ինչպե՞ս» հարցերը:
- Եթե նկատում եք, որ լսարանը չի ընկալում ձեր հարցը, փորձեք այն մասնավորեցնել՝ առաջարկելով կոնկրետ օրինակներ:
- Եթե քննարկումն այլևս նոր մտքեր չի առաջարկում, կարող եք բոլորի ուշադրությունը հրավիրել մեծ էկրանին, որտեղ արտապատկերվում են հարևան սեղանների քննարկումներից առանձնացված մտքերը: Կարող եք անդրադառնալ այդտեղ ներկայացված առավել հետաքրքրական մտքերին և փորձել խրախուսել նոր քննարկում ձեր սեղանին:
- Ձեր սեղանին կարող են լինել մարդիկ, ովքեր սովոր են ղեկավարել քննարկումներ, փորձում են իրենց ձեռքը վերցնել քննարկումը, իրենց միտքը պարտադրել բոլորին: Հիշե՛ք, Դուք եք քննարկման «տերը»:
- Բոլոր մասնակիցները հավասար դերակատարում ունեն, ապահովե՛ք հավասարների քննարկում ձեր սեղանին:
- Այն մտքերը, որոնք, ըստ ձեզ, հետաքրքիր են, շեշտեք՝ ամփոփելով դրանք և այդպիսով հրավիրելով գրառողի ուշադրությունը:

Քվեարկության փուլը

Քննարկումն ավարտվել է քվեարկությամբ: Մասնակիցները պիտի ընտրություն կատարեն առաջարկվող սցենարներից մեկի օգտին:

- Սկսեք քվեարկությունը՝ բարձրաձայնելով սցենարների վերնագրերը:
- Խնդրեք, որ, ձեռք բարձրացնեն ովքեր կողմ են:
- Ամեն սցենարի քվեարկությունից հետո հաշվեք կողմ ձայները, բարձրաձայնեք դրանք, որպեսզի գրառողը մուտքագրի համակարգիչ:
- Նույն կերպ քվեարկության դրեք հաջորդ սցենարները:

Մենք վստահ ենք, որ դուք պրոֆեսիոնալ քննարկում վարող եք: Եվ ողջ քննարկումն ու քվեարկությունը կվարեք այնպես, որ դրանց ավարտից հետո Ձեր սեղանի մասնակիցներն այդպես էլ չեն իմանա, թե իրականում որն էր անձնապես Ձեր դիրքորոշումը քննարկվող հարցերի վերաբերյալ:

Ցուցումներ քննարկման գրառողների համար

Ձեր խնդիրն է հավաքագրել քննարկումների ընթացքում հնչող արժանահիշատակ մտքերը:

Դուք քննարկումներին ընդհանրապես չեք մասնակցում: Լսում եք քննարկումը, որսում մասնակցի գաղափարը, մտքում այն վերաձևակերպում եք ամփոփ դիտարկման, մուտք անում ծրագրում և ուղարկում կենտրոնական համակարգիչ:

Հիշե՛ք՝ Դուք արձանագրող չեք, որ արագությամբ մուտքագրեք այն ամենը, ինչը լսում եք: Ձեզ սպասարկող կենտրոնական համակարգիչը միաժամանակ սպասարկում է նաև մյուս սեղանների

քննարկումները, եթե առանց մտքում համակարգված միտք դարձնելու գրեք ամեն ինչ, կենտրոնական համակարգչի օպերատորը չի հասցնի սպասարկել մտքերի անընդհատ հոսքը:

Աշխատեք բաց չթողնել յուրօրինակ ու գեղեցիկ մտքերը: Եթե միտքն ավարտական տեսքի բերելու համար հարկ կա որոշ խմբագրական, ոճական փոփոխություններ անել, մի՛ խորշեք:

Գրեք ոչ շատ երկար այնպիսի մտքեր, որոնք համապարփակ են և կարիք չունեն նախապատմության: Հիշեք, որ խմբագիրը, ով պիտի էկրան ուղարկի Ձեր միտքը, Ձեր սեղանի մոտ չէ, հետևաբար չգիտի թե ինչի մասին են խոսել ձեր քննարկման ընթացքում: Նախադասությունն ինքը պիտի պատասխանի բոլոր հարցերին: Եթե դուք ուղարկել եք որևէ միտք, իսկ հաջորդը շարադրում եք՝ որպես նախորդի շարունակություն, ապա հիշեք, որ Ձեր նախորդ հաղորդագրությունից հետո խմբագիրն արդեն ստացել է տասնյակ այլ մտքեր, և նա պարզապես չի կարող հիշել, որ Դուք շարունակում եք նախորդ մտքերից մեկը: Ձեր ամեն հաղորդագրություն պետք է անկախ և ամբողջական լինի:

Փորձեք հնարավորին չափ խուսափել տառասխալներից:

Հետևեք քննարկումը վարողին, առանձին դեպքերում նա կամփոփի և կփորձի հասունացնել գրառման արժանի, սակայն դեռ անավարտ գաղափարը:

Եթե ընդհանուր «դահլիճը» քննարկում է երրորդ սցենարը, սակայն առաջին սցենարի վերաբերյալ հիշարժան միտք է առաջացել, ապա մուտքագրեք այն՝ սկսելով «առաջին սցենարի վերաբերյալ» արտահայտությամբ:

Քննարկումը վարողի օգնականից ժամանակին կստանաք հաջորդ սցենարին անցնելու հրահանգը:

Քվեարկության փուլում Ձեր խնդիրը յուրաքանչյուր սցենարին կողմ մասնակիցների ընդհանուր թվի մուտքագրումն է համակարգչային ծրագրի համապատասխան վանդակում:

Մենք չենք կասկածում Ձեր գեղեցիկ հայերենի և ճկուն մտքի հնարավորություններին:

Հավելված 3. Հարցեր, որոնք հնարավորություն կտան սեղանավարներին ուղղորդել քննարկումը

Ներքոշարադրյալ հարցերը և նմանօրինակ՝ Ձեր պատկերացրած այլ հարցեր թույլ կտան Ձեզ Ձեր սեղանի շուրջ քննարկումն ակտիվ պահել, ստիպել մասնակիցներին մտածել ծրագրերի առավելությունների և թերությունների, դրանցում երիտասարդների ներգրավվածության ուղիների մասին, առաջարկել նոր լուծումներ, դիտարկել ծրագրերը երիտասարդական տեսանկյունից և այլն:

Ծրագիր 1. Էթնոզբոսաշրջության զարգացումը Գավառում. ամենամյա «Հովվի փառատոն»

- Ինչպե՞ս կարող է ամենամյա փառատոնը նպաստել զբոսաշրջության զարգացմանը Գավառում:
- Ի՞նչ կարող է տալ այս ծրագրի հաջող իրականացումը համայնքի երիտասարդներին:
- Ի՞նչ իրական հնարավորություններ կարող են ստանալ երիտասարդները ինքնադրսևորվելու այս գաղափարի շրջանակում: Ինչպե՞ս կարող են երիտասարդներն իրենք մասնակցել այս ծրագրի իրականացմանը:
- Ի՞նչ ճանապարհով կարելի է Գավառում գործող երիտասարդական կառույցների ծրագրերը համադրել այս նախաձեռնության հետ:
- Ի՞նչ եղանակով կարելի է «Հովվի փառատոնի» «համբավը» տարածել Հայաստանում, տարածաշրջանում ու աշխարհով մեկ:
- Ինչպիսի՞ ազդեցություն կունենա այս ծրագիրը հենց սարվորների վրա: Հնարավո՞ր է դիմադրություն նրանց կողմից, ինչո՞ւ: Ինչպե՞ս կարելի է ստանալ նրանց աջակցությունը: Ինչպե՞ս կարելի է համադրել զբոսաշրջությունը սարվորի գործունեության ու կենցաղի հետ այնպես, որ առաջինը չխաթարի երկրորդը:
- Այս ծրագրի հաջողության համար ինչպիսի՞ փաթեթներ կարելի է մշակել ներգնա և արտագնա զբոսաշրջիկների համար:

- Զբոսաշրջությունը թեև խթանում է համայնքի տնտեսությունը, սակայն նաև կարող է որոշակի խնդիրներ առաջացնել, տվյալ դեպքում՝ բնապահպանական: Զբոսաշրջիկների մեծ հոսքերը կարող ենք աղտոտվածության պատճառ դառնալ: Ի՞նչ կարելի է անել հավանական ռիսկերը նվազեցնելու համար:
- «Ես առաջարկում եմ բոլորիդ այս և հաջորդիվ քննարկվելիք ծրագրերը դիտարկել նաև տարբեր տարիքի, սեռի, հաշմանդամություն ունեցող/չունեցող մարդկանց, խոցելի խավի վրա հնարավոր ազդեցության տեսանկյունից»:

Ծրագիր 2. Կարիերայի կենտրոնի ստեղծում

- Կարիերայի կենտրոնի անհրաժեշտության մասին Գավառի երիտասարդները հաճախ են բարձրաձայնում: Ի՞նչ կտա կենտրոնը երիտասարդներին:
- Երիտասարդների համար կարիերայի նոր հնարավորությունների ստեղծումը, նրանց ճիշտ ուղղորդումը որքանո՞վ կարող է նպաստել Գավառից մայրաքաղաք կամ արտերկիր տեղափոխվելու միտումների մեղմմանը:
- Ի՞նչ ակնկալիքներ ունեն տարեցները մեծահասակները Գավառի երիտասարդներից, ի՞նչ են իրականում ուզում երիտասարդները, ինչպե՞ս կարելի է երիտասարդների համար պայմաններ ստեղծել դրսևորելու, կայանալու համար, որքանո՞վ կարող է նպաստել կենտրոնը նման խնդիրների լուծմանը:
- Կոնկրետ ի՞նչ պիտի առաջարկի կենտրոնը, օրինակ՝ դասընթացներ, վերապատրաստումներ, տարբեր մասնագիտությունների և հնարավորությունների ներկայացում:
- Թվային տեխնոլոգիաների մեծացող դերակատարության մեր օրերում ինչպե՞ս կարող է Կարիերայի կենտրոնը մեծացնել հասանելի աշխատաշուկան Գավառի երիտասարդների համար, հնարավո՞ր է արդյոք վերապատրաստել և կազմակերպել գործընթացներն այնպես, որպեսզի համայնքի երիտասարդները կարողանան կարիերա անել համացանցի լայն տիրույթներում՝ ապրելով Գավառում աշխատել այլ երկրների ցանցային կազմակերպություններում, վաստակել սոցիալական ցանցերում, զբաղվել շատ մոդայիկ՝ արհեստական ինտելեկտի զարգացման ծրագրերում և այլն:
- Ինչպե՞ս կարելի է համագործակցել գործատուների, միջին մասնագիտական և մասնագիտական կրթական հաստատությունների հետ, կենտրոնի աշխատանքներում ներգրավել գործատուների, քոլեջների և բուհերի Գավառից, Հայաստանի այլ համայնքներից ու Սփյուռքից:
- Գավառ համայնքում երիտասարդների կողմից սոցիալական ձեռնարկատիրության ինչպիսի՞ փորձ կա: Երիտասարդները Գավառում հետաքրքրվա՞ծ են սոցիալական ձեռնարկատիրությամբ (ինչո՞ւ): Արդյո՞ք Կարիերայի կենտրոնի կողմից սոցիալական ձեռնարկատիրության խթանումը կարող է աջակցել երիտասարդներին՝ իրենց ապագան կապելու համայնքի հետ: Ի՞նչն է խանգարում, որպեսզի երիտասարդները ներգրավվեն սոցիալական ձեռնարկատիրական ծրագրերում: Ինչպիսի՞ աջակցություն է անհրաժեշտ նրանց:

Ծրագիր 3. Գավառի «Տուրիստական այցեգրքի» հրապարակում

- Որքանո՞վ հեռանկարային է այս գաղափար-ծրագիրը, ի՞նչ կտա այն Գավառին:
- «Տուրիստական այցեգրքի» հրապարակումով իրականում սկսվելու է Գավառի զբոսաշրջային հնարավորությունները աշխարհին ներկայացնելու երկարատև և բազմաքայլ գործընթացը. ի՞նչ դեր կարող են ունենալ այս ճանապարհի տարբեր փուլերում երիտասարդները:
- Երիտասարդներն ակտիվ են համացանցում, ավելի դյուրին են շփվում «աշխարհի հետ». ինչպե՞ս կարելի է ներգրավել երիտասարդների ներուժը Գավառի զբոսաշրջային հնարավորությունները հանրահռչակելու գործում:
- Ինչպիսի՞ երիտասարդական նախաձեռնություններով կարելի է հանդես գալ «Տուրիստական այցեգրքի» հրապարակումով սկսվող գործընթացի համար զուգահեռ խթաններ ստեղծելու համար:

- Ի՞նչպես ներկայացնել Գավառն աշխարհին: Պատրա՞ստ են արդյոք գավառցիները բոլոր ճամփորդությունների ժամանակ, ամեն անգամ հյուր ընդունելուց այցեգիրք նվիրել ու պատմել Գավառի մասին բոլորին:
- Ժամանակակից թվային աշխարհում որքանո՞վ նպատակահարմար է տպագիր այցեգիրքը: Ո՞վ է դրա լսարանը: Ի՞նչ այլընտրանքներ կարող են առաջարկել երիտասարդները:

Ծրագիր 4. Փառատոնների քաղաք Գավառ. կարողությունների զարգացում

- Ընկալելի է արդյո՞ք շարադրված ծրագիրը, հասկացվո՞ւմ է, որ սա պարզ գույք գնելու ծրագիր չէ, այլ Գավառի մասնագիտացման՝ «Գավառ-փառատոնների քաղաք» մեծ գաղափարի սկիզբ: Ի՞նչ կասեք այս մասին:
- Այս ծրագրով Գավառի համայնքապետարանում ցանկանում են սկսել մի գործընթաց, որով Գավառը կարող է իսկապես դառնալ «փառատոնների քաղաք»: Պատկերացնենք, որ տարբեր ոլորտների՝ մշակույթից մինչև գյուղատնտեսություն, փառատոններ պարբերաբար անց են կացվում Գավառում և դրանք ոչ միայն տեղական նշանակության են, այլև համապետական, անգամ տարածաշրջանային ու համաշխարհային: Ի՞նչ կտա նման իրականությունը Գավառին: Իսկ Գավառի երիտասարդների՞ն:
- Ինչո՞վ և ինչպե՞ս կարող են երիտասարդները մասնակցել այս գործընթացին: Սա չի՞ փոխի արդյոք մթնոլորտը Գավառում, չի բացի արդյո՞ք նոր հորիզոններ երիտասարդների ինքնադրսևորման համար, նրանց նախաձեռնողականության համար:
- Անցյալում Գավառում փառատոններ անց են կացվել՝ Հովվի, փախլավայի, տեղական արտադրանքի: Ուրիշ ի՞նչ ոլորտների փառատոնների նախաձեռնողներ կարող են լինել գավառցիները, Գավառի երիտասարդները:
- Արդյո՞ք այս ցանկությունը/երազանքը ուտոպիստական չէ, թե՞ շատ էլ իրատեսական է, ու եթե «կպնենք, հաստատ անող ենք»:
- Եթե այս ծրագիրը սկիզբն է, ապա ի՞նչ այլ հետևողական քայլեր են անհրաժեշտ, որպեսզի Գավառը դառնա փառատոնների քաղաք, և այս հանրային ռեսուրսը վատնված չհամարվի:

Ծրագիր 5. Երիտասարդների համար մարզաառողջարանային համալիրի հիմնում

- Ինչպե՞ս կհիմնավորեք Գավառում նման համալիր ունենալու կարևորությունը:
- Ինչո՞ւ են երիտասարդները հարցումներում շատ հաճախ առաջարկում նման սպորտային համալիր ունենալու գաղափարը:
- Ի՞նչ ազդեցություն կունենա այս նախաձեռնությունը Գավառի երիտասարդության մոտիվացիաների վրա:
- Հաշվի առնելով Գավառ համայնքի մշակութային առանձնահատկությունները, պատկերացումները երիտասարդ աղջիկների և տղաների հանրայնորեն ընդունելի դերերի մասին, ինչպե՞ս կօգտվեն համալիրի ծառայություններից տղաներն ու աղջիկները, կայանք ու տղամարդիկ: Մեծահասակնե՞րը: Ո՞ր սպորտաձևերն ավելի ընդունելի կլինել այս կամ սոցիալական խմբերի համար:
- Որքանո՞վ հասանելի կլինի համալիրը սոցիալապես անապահով խմբերի համար: Ինչպե՞ս կարելի է ծառայությունները հասանելի դարձնել նրանց համար:
- Այս նախաձեռնության դեպքում էլ փորձել քննարկումը տանել տարբեր տարիքի, սեռի, սոցիալական տարբեր խավերի վրա հնարավոր ազդեցության հարթություններ:

Ծրագիր 6. Նոր երիտասարդական կենտրոնի հիմնում

- Կա՞ արդյոք Գավառ համայնքում 18 և բարձր տարիքի երիտասարդների համար երիտասարդական կենտրոնների կամ երիտասարդական աշխատանքի այլ ձևաչափերի (երիտասարդական տարածքներ, ակումբներ, հաղորդակցման ու համագործակցության

հարթակներ և այլն) ձևավորված պահանջարկ: Եթե կա, ապա ինչպիսի՞ հեռանկարներ կան դրանց հիմնադրման և պահպանման ծախսերը հոգալու համար:

- Ինչքանո՞վ կնպաստի երիտասարդական կենտրոնի գործունեությունը համայնքի երիտասարդների ներուժի շարունակական զարգացմանը: Ի՞նչ խնդիրներ կարող է լուծել կենտրոնը:
- Կենտրոնի գործունեությունը կարո՞ղ է արդյոք խթանել երիտասարդների նախաձեռնողականությանը, համայնքային խնդիրների լուծման մասնակցությանը: Ինչպե՞ս:
- Կենտրոնը կարո՞ղ է կապել երիտասարդներին համայնքի հետ և նվազեցնել արտագաղթը, խթանել խոշորացումից հետո ներհամայնքային երիտասարդական համագործակցությանը՝ հաշվի առնելով տարածաշրջանի առանձնահատկությունները:
- Ելնելով արդեն առկա դրական փորձից, կարծում եք 18-35 տարեկան երիտասարդների համար ստեղծվող երիտասարդական կենտրոնում ևս անհրաժե՞շտ են պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատողներ: Ինչպե՞ս կարող են երիտասարդական աշխատողները նպաստել ապահով ու դրական միջավայրի ստեղծմանը, ոչ ֆորմալ կրթության ու բովանդակալից ժամանցի ապահովմանը:
- Ի՞նչ ուղղվածություն կարող է ունենալ կենտրոնի գործունեությունը:

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

Ծրագիրը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: